ISSN 1829-0361

ԱԾԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ

1(13)

HISTORY MUSEUM OF ARMENIA

PROCEEDINGS
OF THE HISTORY MUSEUM OF ARMENIA

№ 1(13)

МУЗЕЙ ИСТОРИИ АРМЕНИИ

ТРУДЫ МУЗЕЯ ИСТОРИИ АРМЕНИИ

№ 1(13)

YEREVAN 2024 ЕРЕВАН

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ

ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ

№ 1(13)

ԵՐԵՎԱՆ 2024

Տպագրվում է Հայաստանի պատմության թանգարանի գիտական խորհրդի որոշմամբ

Հրատարակվում է 1948 թվականից

Խմբագրական խորհուրդ՝

Նժդեհ Երանյան. *պ. գ. թ. – նախագահ,*
Նելլի Կարապետյան – *պատասխանատու քարտուղար*
Արա Սանճեան, *PhD* (*ԱՄՆ*), Արսեն Բոբոխյան, *պ. գ. թ.*,
Համլետ Պետրոսյան, *պ. գ. դ., պրոֆեսոր*, Համո Սուքիասյան,
պ. գ. թ., դոցենտ, Հարություն Մարության, *պ. գ. դ.*, Հռիփսիմե
Պիկիչյան, *պ. գ. թ., դոցենտ*, Հրաչ Չիլինկիրեան, *PhD* (*Մեծ
Բրիտանիա*), Մխիթար Գաբրիելյան, *պ. գ. թ., դոցենտ*,
Պավել Ավետիսյան, *պ. գ. դ., ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ*,
Ռոբերտո Դան, *PhD* (*Իտալիա*), Ռուբեն Վարդանյան, *պ. գ. թ.*,
Տորք Դալալյան, *բ. գ. թ.*

ISSN 1829–0361

© Հայաստանի պատմության թանգարան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐԽԻՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Անդրանիկ Եսայան

Տավուշ գավառի հոգևոր-մշակութային կյանքը 17-րդ դարում 8

Իրինա Բաղալյան

Այլախոհական և իրավապաշտպան շարժումները
խորհրդային հայաստանում 1960–1980-ական թվականներին 19

Սամվել Պողոսյան

Տիրան արք. Ներսոյանի արխիվը Երուսաղեմի
Հայոց Պատրիարքության Մայր Դիվանում (տեղեկագիր) 37

ԴՐԱՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Մաքսիմ Եվաղյան

Նախնական դիտարկումներ Միտրիդատ I թագավորի դրամի մասին,
չհրապարակված կորպուս և մտորումներ նրա թագավորական
գաղափարախոսության մասին 52

ԱՋԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ասպղիկ Իսրայելյան

Հայկական գաղթավայրերից մի քանիսի ոսկերիչները 70

Հրազդան Թոքմաջյան

Պաշտամունքային կառույցները ասեղնագործություններում 92

Արփակ Ասատրյան

Խորանազարդ սինիներ (ըստ ՀԱԹ, ՀՊԹ, ԵՔՊԹ, ԿԵԹ և ԴԵԹ նյութերի) 99

ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐ ԵՎ ՀԱՎԱՔԱԾՈՒՆԵՐ

Լիաննա Գևորգյան

Ձանգվածային մշակութային միջոցառումները որպես
ժամանակակից թանգարանի գործունեության ակտիվացման միջոց 122

Մեդա Գալստյան

Հավերժի ճամփորդներ. Անկատար երազանքներ ցուցադրությունը 136

Տաթևիկ Մարոյան

Սուրճի առօրեականության պատմության թանգարանային
ներկայացումը և շարունակական կրթության բաղադրիչը 149

Մանե Խառատյան

Ճապոնական ոսկիյո-է գրաֆիկական աշխատանքների
ՀՊԹ-ում պահվող հավաքածուն 164

Ասպղիկ Սիմոնյան

Հնագիտական առարկաների վերականգնում. խեցեղենի
վերականգնման առանձնահատկությունները 192

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ 199

DOI:10.56653/18290361-2024.13-70

Աստղիկ Իսրայելյան
Պատմական գիտությունների թեկնածու

Հայաստանի պատմության թանգարան
astghikisraelian@gmail.com

ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂԹԱՎԱՅՐԵՐԻՑ ՄԻ ՔԱՆԻՍԻ ՈՍԿԵՐԻՉՆԵՐԸ*

Հիմնաբառեր. գաղթօջախ, ոսկերչություն, ակնագործություն, արհեստավորական կազմակերպություն, կնքադրոշմ, եկեղեցական սպաս, ավանդույթ

Հայտնի փաստ է, որ գաղթօջախների ստեղծումը կապված էր երկրի քաղաքական և տնտեսական քայքայման հետ: Արհեստավորների զգալի մասը, նրանց թվում և ոսկերիչները, թողնում էին բուն երկիրը և բնակություն հաստատում օտար երկրներում (Աբրահամյան 1956, 119): Այդ պատճառով հայ ոսկերիչները դարեր շարունակ իրենց երկրից բացի աշխատում էին այն վայրերում, որտեղ հարկադրված, առավելապես՝ բռնի կերպով, տեղափոխվում էր ժողովուրդը՝ Ղրիմում, Լեհաստանում, Բուլղարիայում, Ռուսաստանում, Իրանում, Հնդկաստանում, Եգիպտոսում, Եթովպիայում, Սիրիայում, Լիբանանում և բազմաթիվ այլ երկրներում: Նրանք կրում էին իրենց նախնիներից եկող աշխատաեղանակները, ոճերը, արտահայտչամիջոցները և սերնդեսերունդ փոխանցելով, երկար ժամանակ շարունակում էին պահպանել իրենց հատուկ ազգային բարքերն ու կարգուկանոնը: Գաղթօջախներում հայ վարպետները ստեղծագործում էին և միաժամանակ իրենց արհեստն ուսուցանում էին ինչպես հայրենակիցներին, այնպես էլ օտարերկրյա աշակերտներին:

Գաղութներում բնակվող ոսկերիչների մասին հիմնականում տեղեկություններ ենք քաղում ինչպես հայկական գրավոր և բանավոր նյութերից, այնպես էլ օտար աղբյուրներից:

Շատ կարևոր է, որ տարբեր ժամանակների գրավոր աղբյուրները, թեկուզ ոչ միշտ լիարժեք ծավալով, վկայում են գաղութներում բնակվող հայ արհեստավոր վարպետների մասին: Օրինակ՝ Ղրիմի հայկական գաղութի ոսկերիչներից մի քանիսի մասին իմանում ենք 1347 թ. Սուրխաթում գրված «Ճառընդիրից», որտեղ նշվում է, որ Կաֆայում են աշխատել հայ ոսկերիչներ Մելիքսեդը, Ուռումբեկը և Բաբելին (Աբրահամյան 1964, 175–176): Ղրիմի և Նոր Նախիջևանի հայերի մշակույթի մասին հատկապես արժեքավոր են Ե. Շահազիզի հրատարակած տեղե-

* Ստացվել է 30.03.2024, ուղարկվել է գրախոսման 06.04.2024, ընդունվել է տպագրության 01.07.2024:

կությունները, որտեղ եկեղեցական առարկաների և հատկապես պսակադրության ծեսերի նկարագրության շնորհիվ ենք իմանում ոսկերիչների ստեղծած գործերի մասին: Նախ՝ Շահազիզը նշում է. «Հայ և օտար պատմաբաններից ոմանք հիմնվելով Նոր Նախիջևանի նշանավոր ձեռագիր Յայսմավուրքի հիշատակարանի վրա, կարծում են, թե առաջին անգամ Հայերը գաղթել են Ղրիմ Հայաստանից Անիի կործանումից հետո ժդ դարում, 1330 թվին, երբ Ղրիմին տիրապետում էին թաթարները և Ջանովացիք, ոմանք էլ հիմնվելով այն հանգամանքի վրա, որ Ղրիմում գտնվում են մի քանի հայկական հիշատակարաններ՝ եկեղեցիների ու վանքերի ավերակներ, մատուռներ ու խաչքարեր, որոնց մնացորդների վրա պահված արձանագրությունները և նոցա թվականները հասցնում են Հայերի թերակղզում բնակվելու ժամանակամիջոցը մինչև ժ. ժա. դարերը, կարծում են, թե հայկական գաղթականության սկիզբը Ղրիմում պետք է համարել ժ.-երորդ դարը»: (Շահազիզ 1901, 11–12): Դառնալով եկեղեցաշինարարությանը, նա շարունակում է. «Նյութական բարգավաճման հետ զուգընթացաբար առաջ է գնում և Հայերի մտավոր զարգացումը... Ղրիմի հայերը խիստ շատ եկեղեցի են շինել. միայն Կաֆան ունեցել է 45 եկեղեցի... Այս բոլոր եկեղեցիները, վանքերը և մատուռները զարդարված են եղել թանկագին ոսկե և արծաթե սպասներով, մետաքսյա, բեհեզյա, եկեղեցական զգեստներով, վարագույրներով ու փռվածքով, ականակուռ խաչերով, սաղավարտներով ու վակասներով: Տաճարների պատերի մեջ դրսից ու ներսից հագցրած են եղել բազմաթիվ որձաքար և մարմարիոնյա խաչքարեր նուրբ քանդակներով ու արձանագրությամբ, որոնց շինելու, քանդակելու ու փորագրելու դժվար արհեստը գաղթականները բերած են եղել հայրենիքից... Բոլոր հին շինությունները՝ վանքերը, եկեղեցիները, մատուռները և աղբյուրների ավազանները շինված են եղել հայկական ոճով ու ճաշակով և զարդարված են եղել քանդակագործ փայտյա ամուր դռներով, որոնցից շատերը գաղթականները շատ ուրիշ եկեղեցական զարդերի ու սպասների հետ միասին բերած են եղել Հայաստանից» (Շահազիզ 1901, 18): Հայերին Ղրիմից Նոր Նախիջևան գաղթեցնելու մասին գրված հատվածում նշվում է, որ ռուսական սայլերի վրա բարձված էին գաղթականների բոլոր շարժական գույքը, եկեղեցիների սուրբ սպասները, անոթները, զգեստները, պատկերները մինչև անգամ խաչքարերը և եկեղեցիների հին դռները (Շահազիզ 1901, 38):

Շահազիզը մանրամասնորեն թվարկում է Նոր Նախիջևանի եկեղեցիների սպասներն ու զարդերը, որոնք, ինչպես նշվեց, կարևոր վկայություններ են հայ վարպետների աշխատանքների մասին: Այսպես՝ Նոր Նախիջևանի Ս. Լուսավորիչ (հիմնադրված 1783 թ.) եկեղեցու մասին գրում է. «Ս. Լուսավորիչ եկեղեցին ունի մեծաքանակ զգեստներ, եկեղեցական թանկագին սպասներ ու զարդեր և երկու մասունք՝ Ս. Լուսավորչի և կենաց փայտի: Առաջինը մի արծաթյա ոսկեզօծ մատնը խաչակնքելու ձևով շինած և մատին եպիսկոպոսական մատանի հագցրած աջ է, որի մեջ ներփակած է մասունքը, իսկ երկրորդը կենաց փայտի մասն է, արծաթի մեջ առած և խաչի ձևով շինած: Բացի սոցանից, եկեղեցին ունի և շատ ձեռագիր մատյաններ, որոնցից ութը միայն արծաթապատ ավետարան են, և բազմաթիվ հին, այժմ անգործածելի Ղրիմից բերված խաչեր, վակասներ, բուրվառներ և ուրիշ

այսպիսի եկեղեցական սպասներ» (Շահազիզ 1901, 51–52): Ս. Թեոդորոս եկեղեցում մի արծաթյա ոսկեզօծ գեղեցիկ տուփի մեջ է պահվում (1786 թ. ավարտված և օծված) Թեոդորոս զորավարի մասունքը (Շահազիզ 1901, 56–57):

Խնդրակատար Ս. Աստվածածին (հիմնարկվել է 1781 թ.) եկեղեցին ունի գրչագիր մատյաններ և երկու մասունք «սբ Գէորգայ» և «անայայտ», որոնք պահվում են խաչաձև շինված արծաթյա տուփերի մեջ (Շահազիզ 1901, 60): Ս. Համբարձումի մասին Շահազիզը գրում է. «Այս եկեղեցին էլ ունի ձեռագիր մատյաններ, Ղրիմից բերած հին եկեղեցական սպասներ և մասունքներ – Ս. Մինաս Եգիպտացւոյ, Ս. Օգսենտիոս Հայրապետի և կենաց փայտի: Սոքա ներփակված են արծաթյա խաչերի մեջ և նվիրված են եկեղեցուն առաջինը պճխ թվին, երկրորդը 1890-ին և երրորդը ռճժե-ին: Այս վերջինը ականակուռ է և հիշատակ է ոմն Ոնոփրիոս վարդապետի» (Շահազիզ 1901, 62): Ս. Գևորգ եկեղեցում. «Արժանի է ուշադրության նամանավանդ Գէորգ Դաւթեան Չեպիեանի նուիրած Ս. Գէորգայ մեծ շքեղ պատկերը, որի տակը շինուած է մի փոքրիկ ապակեդուռն պահարան, որի մէջ պահուում է եկեղեցու գլխաւոր սրբութիւնը – Ս. Գէորգ զօրավարի մասունքը: Այդ մասունքը ներփակուած է մի ճաճանչաւոր արծաթեայ տուփի մէջ, որի վերայ գրուած է հետևեալ կարճ յիշատակարանը. “Յիշատակ միտսի Ստեփանի Գենջեցեան 1849 'ի սբ Գէորգ: **Նախիջևան**” (Շահազիզ 1901, 64):

Ինչ վերաբերում է հարսանյաց ծեսերում ոսկերչական առարկաների անհրաժեշտությանը, կարելի է սկսել երգի բովանդակությունից: Նոր նախիջևանում «Հարսնառ» գնալիս, հարսի տան դռան շեմքի մոտ երգում էին: Երգի հատվածներից մեկում ասվում է. «Մեր թագվորին կապան կանաչ էր,/...Մեր թագվորն էր արևու պես.../Մեր թագվորի ձիի ոտքի նալերն էր/Ոսկի, արծաթ գամերով./Մեր թագվորի ձեռքին խաչ/Շինեց ոսկերիչ ոսկեզօծ խաչ» (Շահազիզ 1901, 93):

1832 թ. օժիտի ցուցակում թվարկվում են վարպետների սարքած զարդերի տեսակները, օրինակ՝ «Աղայ Գաբրիէլ Խոճայովն շնորհէ նազելի դստերոջն իւր զօժիտս այսինքն կանացի ոսկեղէն զարդըս... Նախ մեկ լավ ադամանդեա ծաղիկ/ 1. լաւ բերզամ պաղի ադամանդեայ /1. ջուխտ օղ պոլեանտի /1. ջուխտ ևս օղ ադամանդեայ/ 1. Թէօքմէ խաֆէս մրգրտեայ 20 խաթէն, և 2 կղմն 30 հատ ռուպլիէ ոսկով /1. ջուխտ ոսկեայ գոտի և մէջն էլմասեայ /1. ջուխտ ևս ոսկեայ գոտի/ 1. կըշտանոց 40 եալտրզ ոսկիք և մէջն չորսնոց ոսկի /1. լավ մատանի էլմասեայ /1. պուլաքի էլմասեայ... Ստամբուլից բերված /1. լաւ կէրտանլըխ ադամանդեայ / 1. ջուխտ գոտի ևս ադամանդեայ /1. ջուխտ ապոճան այն ևս ադամանդեայ...»: Հարսնացուի գլխին հագցնում էին ոսկիներով զարդարված ֆես, մեջքին կապում էին մարգարտաեռ արծաթե ճարմանդով գոտի, մատերին՝ մատանիներ, ձեռքերին ապարանջաններ, վզին ձգում էին ոսկե շարոցը (Շահազիզ 1901, 90–91):

Նոր Նախիջևանի արհեստագործության մասին ուշագրավ տեղեկություններ կան Վ. Բարխուդարյանի «Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմություն (1779–1861թթ.)» աշխատության մեջ: Այստեղ նա նշում է, որ Գաբրիել Պատկանյանը գրել է. «Առանձին կրպակակարգ ունէին ոսկերիչք, արծաթագործք, պղնձագործք, դարբինք, պայտառք..., ժամագործք, ակնոցագործք... Ազգ համարուեստից առաջին տարիներին կիսասնեին թվով մինչև յոթանասուն և երկու տե-

սակավ»: Գաղութի առաջացման հենց սկզբնական տարիներին արհեստները բավականաչափ կատարելագործված ու մասնագիտացված են եղել և նոր պայմաններում հետագա զարգացում են ապրել (Բարխուդարյան 1967, 195): Ոսկերիչներն ու արծաթագործները հումքը ձեռք էին բերում գերազանցապես առևտրի միջոցով: Նրանք հոչակված էին որպես իրենց արհեստի տեխնիկական պրոցեսներին կատարելապես տիրապետող և նրբաճաշակ իրեր ու կանացի լավորակ զարդեր պատրաստող վարպետներ: Նոր Նախիջևան քաղաքում 1836 թ. կար 43 ոսկերիչ և արծաթագործ: Նրանց արտադրանքը հայերի, առավելապես հայուհիների արդուզարդի հիմնական մասն է կազմել, արտադրվել է նաև դրսի շուկաներում վաճառելու նպատակով (Բարխուդարյան 1967, 197–198):

1840 թ. Ֆրանսիացի հայտնի երկրաբան, ճարտարապետ, աշխարհագրագետ Հոմեր դը Հելը մեծ գովեստով է խոսել նորնախիջևանցիների արհեստների մասին և ընդգծել է, որ հայերը հրաշալի արծաթագործներ են: Նա գրել է. «Կովկասի իշխանների համար շինված ամենագեղեցիկ թամբեր ցույց տվին մեզ: Նրանցից մեկը, կապուտակ թավշից, զարդարված սև էմալով, պատված արծաթյա թիթեղներով արծաթե ասպանդակներով և զարդափայլ սանձով, պատրաստված էր երիտասարդ չերքեզ իշխանուհու համար... Նոր Նախիջևանի արհեստագործ վարպետների դրսի պատվերով կատարած աշխատանքների կամ շուկայի համար արտադրած իրերի մեջ, անտարակույս, առաջնահերթ տեղ էր բռնում Կովկասի լեռնաբնակների, ինչպես նաև ուրիշների համար ձիասարք՝ թամբ, սանձ և այլ անհրաժեշտ իրեր պատրաստելը» (Hommair de Helle 1843, 326):

Շատ խոսուն փաստ է, որ Տագանրոգի քաղաքապետը 1850 թվականի տարեկան հաշվետվության մեջ կառավարության ուշադրությունն է հրավիրում Նոր Նախիջևանի արհեստավորների զենքերի, սանձերի, ձիասարքի պատրաստման և դրանք արծաթյա նուրբ իրերով զարդարելու կատարելության հասցրած վարպետության վրա, ավելացնելով, որ այդ իրերը աչքի են ընկնում իրենց աշխատանքի հիանալի արվեստով (Բարխուդարյան 1967, 202–203):

Նոր Նախիջևանում հայ վարպետների արհեստագործական արտադրանքը, հատկապես ոսկերչական ու արծաթագործական իրերն ու զարդերը, շուկա էին հանվում և լայն տարածում գտնում Կովկասի լեռնականների և ուրիշ ժողովուրդների մոտ: Կատարելության հասցված արհեստների նմուշներն ուղարկվում էին Լոնդոնի համաշխարհային ցուցահանդես (Բարխուդարյան 1967, 449): «Հյուսիսային Կովկասում և հատկապես չերքեզների մոտ շատ բարձր էր գնահատվում և լայն սպառում գտնում Նոր Նախիջևանի արհեստավորների... ձիու սանձերը, թամբերը, ձիակառքի կաշե հարդարանքները, բազմատեսակ գոտիները, կոշիկները, ինչպես նաև ոսկե և արծաթե տարատեսակ զարդերը» (Բարխուդարյան 1967, 277):

Նոր Նախիջևանի արհեստավորական կազմակերպություններն իրենց կառուցվածքով, ներքին կարգ ու կանոնով, ազգային սովորույթների ու ավանդույթների վրա հենվելով, ժառանգել են միջնադարյան Հայաստանի արհեստավորական կազմակերպությունների իրավա-բարոյական նորմերը և սերնդեսերունդ փոխանցվելով հասցրել են այն Ղրիմ, և ապա Նոր Նախիջևան (Բարխուդարյան 1967, 449):

Ռուսաստանի հայկական համայնքների սոցիալական կազմում, առհասարակ, ստվարաթիվ խավը արհեստավորությունն է հանդիսացել, որը տեղավորված է եղել գլխավորապես քաղաքներում, կապված է եղել առևտրականների հետ և կատարել նրանց պատվերները (Աբրահամյան 1964, 382)։ 16-րդ դարում փոքրաթիվ հայ բնակչություն է գտնվել Նիժնի-Նովգորոդում, Արխանգելսկում, Սմոլենսկում և այլ վայրերում։ Այս շրջանի ռուսահայ գաղթօջախներն իրենց բնույթով ավելի նման են եղել առևտրական ֆակտորիաների, քան գաղթօջախների։ Պարսկաստանի և Անդրկովկասի տարբեր վայրերից հայ գաղթականները մեծ խմբերով գալիս էին Ռուսաստան, որոշ ժամանակ մնում էին այնտեղ և իրենց գործարքները վերջացնելուց հետո ետ էին վերադառնում։ Հայ առևտրականներն իրենց հետ ռուսական ցարին թանկարժեք նվերներ էին տանում։ 1663 թ. Մոսկվա եկած հնդկահայ առևտրականներն Ալեքսեյ Միխայլովիչ ցարին նվիրել են թանկագին քարերով մանյակներ և ասեղնագործ կերպասներ՝ 20 000 ռուբլի արժեքով։ Պարսկահայ վաճառական Սահրադյան Զաքարը Ալեքսեյ Միխայլովիչ ցարին նվիրել է Մոսկվայի Կրեմլի զինապալատի թանգարանի զարդերից մեկը՝ ադամանդյա նշանավոր գահը, որն իր ժամանակ գնահատվել է 22 589 ռուբլի և այլն (Աբրահամյան 1964, 369–370)։ Հայ արհեստավորության ներգաղթով շահագրգռված է եղել ռուսական պետությունը. նա մի շարք անգամներ Հայաստանի տարբեր հատվածներից հայ արհեստավորներ է հրավիրել Մոսկվայում աշխատելու համար։ 1659 թ. Խոճա Զաքարին Մոսկվայի Պոսոլսկի պրիկազում խնդրել են Մոսկվա ուղարկել վարպետ ոսկերիչների, նկարիչների, արծաթագործների և այլ արվեստագետների (Աբրահամյան 1964, 382)։ Աստրախանի մասին արժե նշել, որ 1750-ական թթ. այնտեղ արծաթագործների 71,3%-ը հայեր էին (Юхт 1958, 54)։

Լեհաստանի հայկական ոսկերչության պատմության վերաբերյալ Հովսեփ Օրբելին նշում է, որ 1912 թ. Լվովում լույս է տեսել Վլադիսլավ Լոզինսկու վերին աստիճանի հետաքրքիր և արժեքավոր հետազոտությունը Լեհաստանի 14–18-րդ դդ. արծաթագործ և ոսկերիչ վարպետների մասին՝ հիմնված իրեղեն հուշարձանների և Լվովի քաղաքային ու մասնավոր արխիվների ու հավաքածուների վրա։ Այս աշխատության մեջ լվովցի արծաթագործ և ոսկերիչ վարպետների ցուցակներում հայկական շատ անուններ կան, թեև հայերի թիվն ավելի մեծ պետք է լիներ, սակայն դրանք պակաս են քանի որ Լոզինսկին հայ վարպետներին անուններով չէր կարող ճանաչել՝ լեհահայերի ազգանունների վերջավորությունները հարմարեցվում էին լեհերեն լեզվի վերջավորություններին, ինչպես Մոյզեսովիչ, Դաղուրովիչ, Սահակովիչ, երբեմն էլ ազգանունները թարգմանվում էին, ինչպես Սերեբրեկովիչ, Բոգդանովիչ և այլն։ Հայերը հաճախ ուղղակի փոխարինում էին իրենց ազգանունը լեհական ազգանվամբ, ինչպես օրինակ՝ Ստեչկո։

Հայերի մասին հեշտ չէր գրելը նաև այն պատճառով, որ մինչև 1654 թ. ոչ մի հայ իրավունք չուներ համքարություն ընդունվելու և անկախ էր աշխատում։ Իսկ 1654 թվականից հայերին թագավորական հրամանով թույլատրվեց համքարություն ընդունվել, բայց չորս հոգուց ոչ ավելի։ Ըստ որում, այդ հրամանով հայերն իրավունք չունեին համքարության ավագ դառանալու, իսկ 1678 թ. արդեն հայազգի Կիրկոր Լատինովիչին ավագ էին ընտրել։ Միայն 1685 թ. Յան Սոբեսկին հունի-

սի 6-ի հրամանագրով հավասարություն հաստատեց հայերի և լեհերի միջև, հայերին ազատ իրավունք տվեց համքարություն ընդունվելու և ավագ ընտրվելու: Ինչպես նշում է Լոզինսկին, այն ժամանակ եկավ հայերի լիակատար հաղթանակը՝ De Jure նրանք հավասարվեցին, de facto մեծ առավելության հասան: Լեհաստանում 17-րդ դ. ոսկերչության վերածնունդի մասին, ինչպես շարունակում է Լոզինսկին, արդեն լիովին հանգչող այդ արվեստի անսպասելիորեն հանկարծակի ծաղկման նշանակալից, հետաքրքրական, հատկանշական փաստն այն է, որ դրա համար իրենք պարտական են հայերին, որ նշանակում է, թե Լեհաստանում ոսկերչության պատմությունը ինչպես սկսվել էր հայ վարպետների առավելությամբ, այնպես էլ ավարտվել էր նրանցով: 15-րդ դ. սկզբին (1407–1419), այսինքն այն ժամանակից, երբ հնարավոր է դառնում հետևել այդ արվեստի սկզբնավորմանը, Լվովում 18 ոսկերիչ վարպետներից 1-ը լեհ էր, 6-ը հայ, մնացյալը՝գերմանացի: 18-րդ դ. ամենավերջում Լվովում 30 հայ ոսկերիչ վարպետ և ենթավարպետ էր աշխատում՝ ոսկերիչների ընդհանուր թվի կեսից ավելին, իսկ արվեստի և հարստության նշանակությամբ այդ հարաբերակցությունը բարձրագույն աստիճանի էր հասնում: Նա լեհական ոսկերչության զարգացման գործում հայերի մասնակցությամբ է բացատրում մինչև 18-րդ դ. կեսերը լեհական ոսկերչական ստեղծագործություններում արևելյան ոճի ուժեղ ազդեցությունը, որ վերաբերում էր ոսկերչական ստեղծագործություններին՝ զգեստների զարդերին, զենքերին, ձիասարքերին: Այդ ոճերը ստեղծում էին հայ ոսկերիչները և գլխավորապես Լվովի հայերը, քանի որ հնից ի վեր լեհական քաղաքներից ամենից առավել Լվովն էր հայտնի արծաթից ու ոսկուց վարպետորեն և գեղարվեստորեն պատրաստված սրերի որոշակի մասերի բարձրարվեստ գեղազարդմամբ, ձիասարքերի հարուստ զարդարանքներով, վահանների, կապարճների և վառոդամանների նրբակերտ քանդակադրոշմվածքներով: Հայ ոսկերիչներ են եղել Լեհաստանի այլ քաղաքներում ևս (Орбели 1916, 6–9):

Բուլղարիայում 16–18-րդ դդ. հայ արվեստի ազդեցությունը նշանակալի էր ոսկերչության, գորգագործության, հյուսվածքեղենի, մետաքսագործության և այլ արհեստների բնագավառներում (Աբրահամյան 1964, 327): Սակայն հայ վարպետներն այստեղ շատ ավելի վաղ ժամանակներից էին աշխատում, քանի որ հայկական գաղթօջախն այստեղ հիմնադրվել է 5-րդ դ. կեսերին (երբ Արտավան և Գագիկ իշխաններն իրենց զորքով գնացին Բալկանյան թերակղզու արևմտյան մասը՝ Նիկիա (այժմ՝ Նիշ): Հետագայում հայ-պարսկական, պարսկա-բյուզանդական, արաբա-բյուզանդական ընդհարումների հետևանքով Վասպուրականից, Թեոդոսուպոլսից (Կարին, Էրզրում), Մելիտինեից հայ բնակչության հոծ զանգվածներ բռնի գաղթեցվեցին Բալկաններ և բնակեցվեցին կայսրության հյուսիսային և արևմտյան սահմաններում: Հայերի բռնագաղթը Բալկաններ մեծ չափերի հասավ 8-րդ դ. կեսերից, երբ Հայաստանում ծավալվեցին աղանդավորական շարժումները: Դաժանորեն ճնշելով պավլիկյանների, ապա թոնդրակեցիների դիմադրությունը, Բյուզանդիայի Թեոդորա կայսրուհին, Վասիլ I և Հովհաննես Չմշկիկ կայսրերը Բալկաններ գաղթեցրին հազարավոր հայ աղանդավորների և բնակեցրին Ֆիլիպոպոլսի (այժմ Պլովդիվ) շրջակայքում, Մակեդոնիայում և Դանուբի

առափնյա քաղաքներում: Կազմավորվեցին Նիկիայի, Ֆիլիպոպոլսի, Մգլենի, Բիթոլիայի, Տիռնովոյի, Ադրիանապոլսի և այլ վայրերի հայ համայնքները: 13–14-րդ դդ. մոնղոլների և թուրքերի արշավանքների հետևանքով Հայաստանից և Կիլիկիայից Բուլղարիա տեղափոխվեցին գաղթական նորանոր խմբեր: Հայաստանում թուրք-պարսկական ավերիչ պատերազմների հետևանքով Նախիջևանից, Երևանից, Շոռոթից, Կարբիից, ինչպես նաև Մոլդավիայից, Լեհաստանից, Ղրիմից Բուլղարիա տեղափոխվեցին հայ գաղթականության նոր զանգվածներ, ստեղծվեցին նոր համայնքներ: 1808 թ. Բուլղարիայի քաղաքային հայ բնակչությունը 10 000 էր, մեծամասնությունը՝ ոսկերիչներ, պղնձագործներ, դերձակներ, կաշեգործներ, կոշկակարներ, հյուսներ, քարտաշներ, ատաղձագործներ, հացթուխներ, առևտրականներ և այլն: 1877–1878 թթ. հայերի թիվը հասավ 13 000: 1892 թ. Բուլղարիայում ժողովրդական տնտեսության նվաճումների ցուցահանդեսում հայ արհեստավորներն աչքի ընկան. «Ля Булгари» թերթը հայ ոսկերիչների մասին գրեց. «Զբուկչյան և Կ⁰» ընկերությունը ցուցահանդեսին ներկայացրել էր ոսկե և արծաթե ծխախոտատուփեր՝ զարդարված թանկարժեք քարերով և Բուլղարիայի ականավոր գործիչների դիմանկարներով: Այս ընկերությունն արդեն երկու առևտրական տուն ունի Կոստանդնուպոլսում և այժմ բաժանմունք է բացել Ֆիլիպպեյում» (Овнанян 1968, 156–157): 1926 թ. «Ամենուն տարեցույց»-ում կարդում ենք. «Հայը Պուլկարիան նկատած է իբրև իր Բ հայրենիքը վաղնջուց ժամանակներէ, մանաւանդ 95-ի Թուրքիոյ ջարդերէն ի վեր մինչև այսօր ապաստան գտնելով հոն և փարելով շինարար աշխատանքին:

Պուլկարիոյ ազատագրական շարժումը յավերժացնելու համար Սոֆիա կառուցուած Ս. Ալեքսանդր Նևսքի – պլկր. ազգային Սուրբ (1717) – յիշատակարանտաճարի օծումը Պուլկարահայութեան նոր առիթ մը ընծայեց՝ իր եղբայրական շնորհապարտ զգացումը յայտնելու նոյն տաճարին մատուցած արգաղիր[1] նուէրով մը որ ոսկեայ և արծաթեայ գեղակերտ խաչ մըն էր: Տասնեակ մը հայ ոսկերիչներ գիշեր ցորեկ աշխատելով 2 շաբաթէն պատրաստեցին զայն. ծանրութիւնն է 10 քիլօ, բարձրութիւն 85 հարիւրորդամեդր: 12 Սեպտ. 1924-ին, տաճարին օծման ներկայ գտնուեցան թագաւորը, նախարարք, ազգ. երեսփոխանք, օտար տէրութեանց ներկայացուցիչք և այլն: Մասնաւոր տեղ յատկացուած էր հայ պատուիրակութեան: Յաւարտ արարողութեանց, սոյն խաչը յանձնուեցաւ նխգի. մետրոպոլիտ Մաքսիմի՝ մերոնց կողմէ պատշաճ ուղերձով մը, որուն Ն. Սրբազնութիւնը սապէս պատասխանեց. ”Շնորհակալ եմ ձեր թանկագին նուէրին համար: Հայերը միշտ իմ սրտիս մօտիկ եղած են Պուլկար էկզարքայութեան հաստատումէն ցայսօր, անոնք որ և է առթիւ չեն զլացած մեզ բարոյական աջակցութիւննին: Կ’աղօթեմ առ Բարձրեալն Աստուած որ իր բարիքները շնորհէ բազմաչարչար ու տառապեալ հայ ժողովրդեան” և փառաշուք քառաթևը համբուրելով՝ յանձնեց փոքրաւորին որ տարաւ զետեղել զայն աւագ-խորանին վրայ» (Թէոդիկ 1926, 523–524): Խաչը կանգնած է աստիճանաձև պատվանդանի վրա, ծայրերը զարդարված են զուգա-

1 Արգաղիր, Յարգանքի կմ յիշատակի համար տաճարում դրված (նուէր) (Մալխասեանց 1944, 255):

թելի աշխատանքով և յուրաքանչյուր թևի վրա թանկագին քարեր ունեն, կենտրոնում Քրիստոսի Խաչելությունն է պատկերված:

Բյուզանդական կայսրության (և նույն տարածքում՝ կայսրության անկումից հետո՝ Բուլղարիայի տարածքը ներառյալ) տարբեր գաղթօջախներում հայերը դարեր շարունակ մեծ ներդրում են ունեցել արվեստի, արհեստի և բազմաթիվ այլ ոլորտներում: Օրինակ՝ փաստ է, որ «Թրակիա տեղափոխված հայերը միայն քաջ զինվորներ ու զինվորականներ չէին, այլև շատ գործունյա և հմուտ առևտրականներ ու արհեստավորներ, որոնք մեծապես նպաստեցին առևտրի և արհեստների զարգացմանը ոչ միայն Թրակիայում, այլև նրա մերձավոր շրջաններում» (Բարթիկյան 2003, 23), ինչպես նաև մյուս վայրերում: Սիրարփի Տեր Ներսիսյանն արդարացիորեն գրում է, որ հայկական մշակույթը Բյուզանդական քաղաքակրթության մաս էր կազմում (Der Nersessian 19475, 3):

Գալով ավելի ուշ շրջանին, կարելի է մի քանի օրինակ բերել: Այսպես՝ Տրապիզոնի 17-րդ դ. հայ ոսկերիչների մասին արժեքավոր տեղեկություններ կան Էվլիա Չելեբիի գրառումներում. «Աշխարհում Տրապիզոնի ոսկերիչների նման կատարելագործված վարպետներ չկան... Այնպիսի ձիու սանձեր, բուրվառներ, վարդաջրի ամաններ, սրեր, խոհանոցի դանակներ են պատրաստում, որ նմանները այլ երկրներում չեն գտնվի...» (Չելեբի 1967, 45): 19-րդ դ. վերաբերյալ Արմենակ Սագըզյանը գրում է. «Անցեալ դարուն մէջ Տրապիզոնի ոսկերիչները ընդհանրապես Հայեր էին: Տրապիզոնցի զարգացեալ ազգայիններ տեղական արծաթէ առարկաներու հաւաքածոներ կազմած էին: Արդեօք ու՞ր են հիմայ այս հաւաքիչները և իրենց հաւաքածոները» (Սագըզեան 1930, թիւ 6, 39): Վ. Զգլենիցկին էլ հիշատակում է տրապիզոնցի հայ վարպետ Չոլաքյանի մանրարուրքի եղանակով սարքած կառքը՝ պատրաստված Բաքվում, դաղստանցի լակ Ջանդարովի արհեստանոցում, որը 1900 և 1901 թթ. ներկայացվել էր միջազգային ցուցահանդեսների (Згленицкий 1902, 194–195): Կարելի է ավելացնել, որ արծաթագործ Չոլաքյանները եղբայրներ էին՝ Սարգիս Մելիքի Չոլաքյանը և Պողոս Մելիքի Չոլաքյանը, որոնք Տրապիզոնի քաղաքացիներ են եղել, հետո՝ աշխատել Բաքվում: 1899 թ. Սարգիսը 19 տարեկան է եղել, երբ Փարիզի ցուցահանդեսի համար նմուշներ պատրաստելու վարկ է ստացել: Առարկաները Փարիզից ետ են բերվել 1901 թ.: Նրան երաշխավորել էր ավագ եղբայրը՝ Պողոսը (Аствацатурян 1978, 88): Տրապիզոնի ոսկերիչների սարքած առարկաներն իսկապե՛ս անգերազանցելի են նրբության կատարելությամբ: Այդ մասին են վկայում Հայաստանի պատմության թանգարանում պահվող փոքրաքանակ գլուխգործոցները: Ցավալի է, որ վարպետների վերաբերյալ տեղեկությունները սուղ են:

Քյոթահիայում ևս ոսկերչությունը հայոց ձեռքին էր: «Յայտնի ոսկերիչներ էին՝ Հաճի Արսլանեան, Հաճի Ստեփան Աղա, Տուզագլըեան Յովհաննէս աղա, Հերիքնազեան Յակոբ աղա և որդի, Խոզակեան Գէորգ աղա, Տէր Մեքսիլեան Նշան և որդի, Դաւիթեան եղբարք... հայ բնակչութեան մեծ մասը արհեստաւոր էր», — գրում է Ա. Ալպոյաճյանը (Ալպոյաճեան 1961,19):

Ստամբուլի մասին խոսելիս նախ պետք է սկսել նրանից, որ 6-րդ դարից ի վեր հայերը շարունակ բնակության են գնացել ու տարվել Կոստանդնուպոլիս:

Նրանց մեջ եղել են կարնեցի, կիլիկեցի, վասպուրականցի, ակնեցի և այլ վայրերից եկած ոսկերիչներ, որոնք կրում էին հայկական ոսկերչական լավագույն դպրոցների ավանդույթները: 15-րդ դարում Մուհամադ Ֆաթիհը Էրզրումի, Երզնկայի, Բաբերդի, Տիվրիկի, Սեբաստիայի, Դիարբեքիրի և այլ վայրերի հայ արհեստավորներին հավաքագրեց ու բռնությամբ տեղափոխեց Ստամբուլ: Այնուհետև բռնագաղթի ենթարկվեցին հայեր Բրուսայից, Բաբերդից, Արաբկիրից, Ամասիայից, Կիլիկիայից, Եվդոկիայից, Ակնից: Հետագայում՝ 1479, 1514, 1534 թթ. տեղի ունեցան հայ արհեստավորների նոր բռնի տեղահանումներ՝մայրաքաղաքում վերաբնակեցնելու նպատակով (Զուլալյան 1972, 289): Երբ 1513թ. Յավուզ Սուլթան Սելիմ Ա-ն հաղթեց պարսից Շահ Իսմայիլին և Դավրեժը գրավեց, այնտեղից բռնի կերպով բազմաթիվ արվեստագետներ ուղարկեց Պոլիս, որոնց մեծ մասը հայեր էին: 1544 թ. Սուլթան Սուլեյմանն արշավեց հայկական Երևան և Նախիջևան քաղաքների վրա, որոնց բնակիչներից մի ստվար թվով մարդկանց բերեց Պոլիս: 1577 թթ. կրկին Դավրեժից ու Նախիջևանից հայեր գաղթեցվեցին Ստամբուլ (Հնասէր 1928, 1516) և այլն: Ինչպես նշում է Հասմիկ Ստեփանյանը, Կանունի Սուլթան Սուլեյման Ա-ն 1534 թ. Վանից ու շրջակայքից բազմաթիվ հայ արհեստավորների, մասնավորապես վարպետ ոսկերիչների, բռնագաղթեցրել է Պոլիս (Սամաթիա): Դրանց թվում հայտնի են եղել Բահա Ջենոն Քազաքյանը, արծաթագործ Գասպարը: Վարպետ արհեստավորների Կոստանդնուպոլիս բռնի բերելը շարունակվել է անընդհատ՝ մյուս սուլթանների կողմից ևս, և ոչ միայն Պոլիս, այլև ողջ կայսրության տարածք: Բոլոր գավառների քաղաքներում հայ ոսկերիչները և արծաթագործները գերադասելի են եղել իրենց ազնիվ նկարագրով ու նուրբ արվեստով (Ստեփանյան 2011, 584–585):

Ս. Ֆոն Կեռլախը (S. von Gerlach)՝ Ստամբուլի գերմանական դեսպանատան մատրապետն իր օրագրերում ուշագրավ փաստեր է գրանցել հայերի և նրանց պատրիարքի մասին: 1576 թ. մայիսի 25-ին, Համբարձման տոնին նա այցելել է Ս. Գևորգ եկեղեցին: Այս առթիվ գրել է. «Հայերը՝ ընդհանրապէս անկեղծ, օրինապահ, բաց-սիրտ և մարդու-մօտ են: Հաճելի խօսակցութիւն մ'ունին անոնք և բնաւ հպարտ չեն Յոյներուն պէս, որոնք շատ յոխորտ են: Հայերու մէջ շատ ոսկերիչ կայ»: Նա ևս վկայում է, որ 1576-ին Օսմանյան մայրաքաղաքում մեծ թվով ոսկերիչներ են եղել: Բացի այդ, 1577 թ. նա գրել է. «Հայ տղաքներուն[2] մետաքսէ հագուստ կը հագցնեն և մատերնին ալ մատանիներով կը զարդարեն»: Ընդհանրապես հայերը Կ. Պոլսում գլխավորաբար փոռան վարպետներ էին (հացագործ), ոսկերիչներ, մուշտակագործներ և այլն (Հնասէր 1928, 1515–1516): Այստեղ արժեքավոր է նաև երեխաների զարդերի մասին վկայությունը: Ի դեպ, երեխաները միշտ էլ զարդեր կրել են. սա ցույց են տալիս հնագիտական պեղումների ժամանակ հայտնաբերված բազմապիսի նմուշները (օրինակ՝ աղջկա ոսկե նրբագեղ ականջօղերը, ՀՊԹ N 1841ա,բ, Ք. ա. 8–7-րդ դդ.), իսկ ավելի ուշ շրջանի վերաբերյալ՝ հին լուսանկարները:

2 Փոքրահասակ երեխայ մինչև պատանեկութեան հասակը, մանչ թէ աղջիկ (Մալխասեանց 1945, 421):

1592 թ. սուլթանը հրամայել էր պատժել կնքադրոշմ չունեցող արծաթե առարկաներ վաճառողներին և սկսեցին դրոշմվել արծաթե բոլոր առարկաները: Հայտնի է, որ 16-րդ դ. հայ վարպետները Կոստանդնուպոլսում շարունակում էին ոսկերչությունը զարգացնել, ստեղծելով փորագրազարդման, սևադի, արծնապատման, սղոցով կտրատվող և այլ տեսակների աշխատանքներ: Բայց քչերի անուններն են պահպանվել: Դրանցից են Հայ Այտընը և Հայ Խաչատուրը: Հետագայում հայ վարպետների քանակն ու հարգը անընդհատ աճեցին (Սագըզեան 1930, թիւ 6, 39–40): 18-րդ դարում Կ. Պոլսի հայ ոսկերիչները միաժամանակ թանկագին քարեր (մասնավորապես ադամանդ) մշակող լավագույն արհեստավորներն էին (Ղազարյան 1972, 307), և որ ամենակարևորն է՝ «Կ. Պոլսոյ ոսկերիչներուն դասակարգը գրեթե միայն Հայ արհեստավորներէ կը բաղկանայ» (Սագըզեան 1930, թիւ 5, 14):

18-րդ դարում և 19-րդ դ. առաջին կեսին սուլթանների ոսկերչապետներն էին Տյուզյանները: Այնուհետև ավելացավ նաև փողերանոցի տնօրենի պաշտոնը: «Այս պատճառաւ է, որ ամենէն խնամեալ արծաթէ հին առարկաները “փողերանոցի գործ” կը կոչուին: Սուլթանները այս գործերը իրենց երկրներուն արտադրութեան ամենագեղեցիկներէն կը նկատէին և Սուլթան Սէլիմ Գ. իր դեսպանին Ապտ-իւր-Ռահիմ Մուհիպ էֆենտիի միջոցաւ Նափոլէոն կայսեր ներկայացնել կուտար Տիզերուն առաջնորդութեան տակ շինուած այս կտորներէն» (Սագըզեան 1930, թիւ 5, 14): 18-րդ դ. Միքայել Չելեբի Տյուզյանն էր (1724–1783 թթ.) կարգվել Թուրքիայի արքունի փողերանոցի տնօրեն՝ զուգընթաց կերպով զբաղվելով ոսկերչությամբ, նկարչությամբ և քիմիայով: Սարգիս Չելեբի Տյուզյանը (1774–1819 թթ.) եղել է Թուրքիայի արքունի գանձատան ոսկերչապետը (Ղազարյան 1986, 23): Վ. Աբրահամյանը Տյուզյանների առիթով նշում է. «Հայ ոսկերիչները, սկսած բյուզանդական շրջանից, իրենց գեղարվեստական գործերով առաջնակարգ տեղ են գրավել և տվել հանճարեղ ոսկերչապետներ սուլթանական պալատին. հայտնի է Հարություն Տյուզյանի տունը, որ 1600 թ. եկել էր Սեբաստիայի Տիվրիկե քաղաքից... 1806 թ. տասնութ ամենահայտնի ոսկերիչներից տասնյոթը հայեր էին, մեկը՝ հույն» (Աբրահամյան 1956, 137): Ինչպես նշում է Հ. Ստեփանյանը. «Արքունի ոսկերիչ-գերդաստանների շարքում անմոռաց անուններ են եղել Նշասթճյանները, Պապայանները, Ձինկիլլիները, Արզուման Էքմեքճյանը, Քերովբե Թուլումպաճը օղլուն, Լևոն Մազլումյանը, Տ. և Լ. Ազիզյանները... Հայտնի վարպետներից են եղել Մկրտիչ Բենտերյանը, Կարապետ Գաբամաճյանը, Կարապետ Բաբայանը և այլոք: Բացի զարդերից, կենցաղային ու եկեղեցական առարկաներից, հայ ոսկերիչները նաև Օսմանյան կառավարության շքանշաններն ու նրանց մատուցած նվերներն են պատրաստել, ինչպես օրինակ գերմանական կայսեր երկու այցելությունների ժամանակ Աբդուլ Համիդ Բ-ի՝ նրան նվիրած մեդալները, թանկարժեք ակնոցներն ու զարդերը Քերովբե Թուլումպաճյանի ձեռակերտներն են եղել: 19-րդ դ. սկզբում ոսկերչության արհեստը ներառել է մի շարք նեղ մասնագիտություններ՝ ադամանդահղկիչներ, ոսկերիչներ, ընդելուզիչներ (seritisseure), փորագրիչներ, փայլագործներ, քանդակագործներ, արծնագործներ (էմալի վարպետներ), զուգաթել ցանցահյուսի (ֆիլիգրան) վարպետներ և այդ արծաթաթելը

պատրաստողներ, ոսկեզօծիչ, ժամացույցատուփի նորոգիչներ, արծաթանկարիչ, արծաթագործ, հալեցնող-գլանիչ, ձուլիչ, փոշեհավաք, ձուլավաճառ, տուփագործ, վաճառարկու (courtier)... 19-րդ դարում «սևադա»-ի օգտագործումը տարածվեց նաև Կարինի, Սեբաստիայի, Ադանայի, Իզմիրի, Իզմիթի, Պոլսի, Բաղեշի, Տիգրանակերտի, Կոնիայի, Թավրիզի ոսկերիչ-արծաթագործների շրջանում և վերելք ապրեց: Պոլսահայ ոսկերիչներից միջազգային ճանաչում է ունեցել նաև Ազնավուր անունով վարպետը, որի ստեղծած արծաթագործական եղանակը կոչվել է "Ազնավուրի գործ"[3]: Այն իրականացվում էր մետաղե ճախարակի վրա անցկացված արծաթե իրը արագորեն պտտելով ու փորագրական գրչով առարկայի վրա զուգահեռականներ, ուղիղ կամ ալիքավոր գծեր փորագրելով: Շատ կարևոր է, որ գոյություն են ունեցել ոսկերչության դասագրքեր» (Ստեփանյան 2011, 586–591):

Արտակարգ շնորհակալ աշխատանք է կատարել Վահե Շատվորյանը՝ ամենայն բարեխղճությամբ ներկայացնելով «ոսկերչաց արհեստի ճիւղաւորումները» բոլոր մանրամասնություններով և հայ ոսկերիչների ցուցակները՝ ըստ մասնագիտացումների: Մի փոքր հատվածն իսկ տպավորիչ է և խոսուն. «... արուեստագետներէն Մկրտիչ Պենտէրեանը... եղած է միջազգային չափանիշով արուեստագէտ փորագրիչ մը՝ ադամանդի և արժէքաւոր գունաւոր քարերու վրայ: Այս մեծատաղանդ հայուն բարձրարուեստ գեղարուեստական գործերը այսօր ոսկերիչ հնագէտներու կողմէ ձեռքէ ձեռք կը խլուին: Այդ գործերէն կը գտնուին թրքական և օտար թանգարաններու հաւաքածոներու մէջ և անհատներու մօտ... Քերովբէ Թոլումպաճըօղլու (ոսկերիչ զարդափորագրիչ), Լևոն Մազլումեան (ոսկեձուլիչ-սատէքեար)... ոսկերչութեան պատմութեան մէջ անմոռանալի պիտի մնան» (Շատուորեան 1975, 18–28):

Կ. Պոլսում աշխատող հայտնի ոսկերիչներից է եղել Կարապետ Արիֆյանը՝ ծնված Ակնում 1868 թ.: Նա այնպիսի հեղինակություն ու հարգանք էր վայելում, որ իրեն էին հանձնարարել զինանշան պատրաստել պարսկական Շահ Մուզաֆեդդինի համար: Շահը միայն պաշտոնական հանդիսությունների ժամանակ էր այն կրում կրծքին և այնքան էր հավանել զինանշանը, որ անձամբ Արիֆյանին շնորհակալական նամակ ու մեդալ էր ուղարկել՝ ի նշան գնահատանքի: Արիֆյանի համբավն այնպես էր տարածվել Մերձավոր Արևելքի ազնվատոհմ ընտանիքներում, որ նրան հրավիրել էին Կահիրե՝ ընտանյոք հանդերձ: Եգիպտոսում Կարապետ Արիֆյանի հեղինակությամբ է պատրաստվել զորավար Անդրանիկի հայտնի սուրը՝ զարդարված թանկարժեք քարերով, որը զորավարին նվիրեցին 1920 թ. Կահիրե ժամանելու առթիվ: Պատրաստող մյուս վարպետներն են Տեմիրճյանը, Գարագաշը և Մինասյանը (Chalabian 1993; Մուշեղյան 2009, 31):

«Կ. Պոլսի էսնաֆություններից ամենանշանավորը ամբողջ երկրում ու Եվրոպայում հայտնի ոսկերիչներինն էր»: Հայ վարպետներն աշխատելով տարբեր ոճերով, շուկայից դուրս էին մղում եվրոպական արտադրանքը: Կոստանդնուպոլսի շուկայում նրանք ընդարձակ հրապարակ էին զբաղեցնում իրենց մեծ ու փոքր արհեստանոցներով, որտեղից էլ նրանց արտադրանքը վաճառվում էր քաղաքում

3 Դրոշմը տե՛ս Garo Kurkman, p. 53.

և արտահանվում էր երկրից (Ղազարյան 1974, 321)։ Հարկավոր է ընդգծել, որ այսօր ևս հայ վարպետներն այստեղ անգերազանցելի են։ Արժե մեջբերել «Գոլոս Արմենիի» թերթի 2011 թ. նոյեմբերի 15-ին լույս տեսած հոդվածի այն հատվածը, որը վկայում է՝ «Թուրքական հրատարակությունը գրում է, որ Աբդուլլա Գյուլը Լոնդոն այցելեու առիթով հատուկ ֆրակ է պատվիրել հայ դերձակին, որի անունը, ի դեպ, չի նշվում... Հայտնի է, որ Թուրքիայի առաջին տիկին Այրունիսա Գյուլը նույնպես անտարբեր չէ հայ վարպետների աշխատանքների նկատմամբ։ Անցյալ տարի Ստրասբուրգ այցելության ժամանակ, երբ Թուրքիայի առաջին տիկինը ելույթ ունեցավ Եվրոպական Խորհրդարանական վեհաժողովում, նրա մատին շողշողում էր ստամբուլցի հայ հայտնի վարպետ Սևան Բըչաքչըի սարքած մատանին։ Երբ լրագրողները հետաքրքրվեցին Այրունիսա Գյուլի հիանալի մատանիով, Թուրքիայի առաջին տիկինը հպարտությամբ ասաց, որ այն հայ վարպետ է պատրաստել։ ''Մեզ մոտ արհեստավորները հայեր են և հույներ։ Դա մեր բազմազանությունն է, մեր գեղեցկությունը... Աշխարհում չկա մի մարդ, որ չճանաչի Սևանին։ Ես այս մատանին կրում եմ հատկապես արտասահմանյան ուղևորությունների ժամանակ'', — ասել էր Այրունիս Գյուլը» (Голос Армении, 2011, 4)։ Օսկարակիր հայտնի դերասանուհի Վուփի Գոլդբերգն էլ «Օսկար» մրցանակաբաշխությանն է ներկայացել Սևան Բըչաքչըի ստեղծած բացառիկ ապարանջանով. «Այս զարդը ստեղծող ջենթլմենի անունը Սևան Բըչաքչը է։ Ես միտումնավոր եմ ընտրել զուսպ զգեստ ու կոշիկներ, որպեսզի մարդկանց ուշադրությունը հրավիրեմ այս գեղեցիկ ապարանջանի վրա», — ասել է Գոլդբերգը[4]։

Ստամբուլում ներկայում աշխատող վարպետների մասին «Նոր Մարմարա» օրաթերթի 2017 թ. մարտի 8-ի համարում կարդում ենք. «Գատիր Հաս համալսարանի շրջագծին մէջ գտնուող ''Ըէզան Հաս'' թանգարանի սրահներուն մէջ 16 փետրուարէն ի վեր բացուած է շատ հետաքրքրական ցուցահանդէս մը որ քով քովի կը բերէ Գոց Շուկայի ոսկերչական աւանդութիւնը կենդանի պահող վերջին սերունդի մեծ վարպետներուն անուններն ու գործերը։ Այս վարպետները կենդանի կը պահեն 550 տարիէ ի վեր շարունակուող աւանդութեան մը հիմնական գիծերը... Ցուցահանդէսը այս կերպով հանրութեան կը ներկայացնէ այն մեծ վարպետները որոնք արհեստը միացուցած են տաղանդին։ Բայց հետաքրքրական ու մեզի համար հպարտացուցիչ է որ այստեղ ներկայացուած ոսկերիչ վարպետներուն ջախջախիչ մեծամասնութիւնը հայ է» (Նոր Մարմարա 2017)։

Այսպիսով՝ տեսնում ենք, որ Ստամբուլում (Կոստանդնուպոլսում) հայ մասնագետները դարեր շարունակ աշխատելով ու զարգացնելով մշակույթի տարբեր ճյուղերը, կարևոր տեղ են գրավում նաև ոսկերչության ոլորտում։

Իրան Հայկական զարդերն ու ոսկերչական մյուս առարկաներն, առհասարակ, պատրաստվում էին թե՛ քաղաքներում, թե՛ գյուղերում։ Սա վերաբերում է ինչպես Հայաստանի, այնպես էլ տարբեր երկրների հայաբնակ վայրերի վար-

4 Սևան Բըչաքչըն ծնվել է 1964 թ. Ստամբուլում։ Նա համարվում է աշխարհի լավագույն ոսկերիչներից մեկը։ Նրա ստեղծած զարդերը կրել են Քեթրին Զետա Ջոնսը, Սելին Դիոնը, Լիվ Թայլերը, Միայա Քերին, Բրուք Շիլդսը և այլոք (https://www.tert.am/am/news/2016/03/01/golberg/jewellry/1948437)

պետներին: Օրինակ Փերիայի Հազարջիբ, Մուքելի և Սանգիբարան գյուղերում մեծ թվով ոսկերիչներ են եղել: Եվ Մուքելի գյուղն այնքան հայտնի է եղել իր ոսկերիչներով, որ պարսիկներն այն անվանել են "Դէհը զարգեարհա", որ նշանակում է «ոսկերիչների գյուղ» (Մինասեան 1983, 36): Ինչ վերաբերում է Իրանին, այնտեղ դարեր շարունակ մեծաքանակ հայ արհեստավորություն է եղել: Հայ բնակչություն կար դեռևս Ք.ա. 6-րդ դարում՝ հայկական զորամասերը վասալական պարտավորություն էին կատարում Աքեմենյան պետությունում: Այստեղ նաև զգալի թիվ էին կազմում հայ առևտրականները և արհեստավորները: Իսկ որպես բնիկներ, հայերն ապրում էին Ատրպատականում կամ պատմական Պարսկահայքում՝ Թավրիզ, Մարանդ, Ուրմիա, Խոյ/Հեր, Մաղարա, Սալմաստ (Զարևանդ), Մակու (Արտազ), Ղարադաղ (Փայտակարան) և այլն: Պարսկահայքը հայկական պետականության անկումից հետո մտավ Իրանի կազմի մեջ: Բացի այդ, մեծ բռնագաղթեր են իրականացրել Իրանի տիրակալները՝ 3-րդ դարում Սասանյան Արտաշիր թագավորը, 4-րդ դարում Շապուհ II-ը (որ հազարավոր հայերի բնակեցրեց Խուզիստանում և Իրանի հարավ-արևմտյան շրջաններում) և 17-րդ դարում շահ Աբբաս I-ը, որ հսկայական քանակությամբ հայեր գաղթեցրեց 1604–1605 թթ. և գլխավորապես բնակեցրեց Սպահանում: Դրանք Արևելյան և Արևմտյան Հայաստանի բնակիչներն էին Նախիջևանից, Եղեգնաձորից, Գեղամա լճի ավազանից, Լոռուց, Ապարանից, Շարապխանեից, Շիրակից, Զարիշատից, Կարսի գյուղերից, Կաղզվանից, Ալաշկերտից, Մակուի գյուղերից, Աղբակից, Սալմաստից, Խոյից, Թավրիզից և շրջակա գյուղերից, Արարատյան դաշտից, Երևան քաղաքից, Ղրբուլաղից, Կարնո գավառից, Բայազետից, Խնուսից, Մանազկերտից, Արծկեից, Արճեշից, Բերկրիից, Վանից և այլ վայրերից (Հովհաննիսյան 1972, 99):

17-րդ դ. Թավրիզի ոսկերիչների մասին Էվլիա Չելեբին նշում է. «Այստեղի... ոսկերիչներն ու դերձակները կատարյալ վարպետներ են և ոչ մի երկրում չկան» (Չելեբի 1967, 78): 19-րդ դ. շահական կառավարությունը երկիրը լճացումից հանելու համար, արհեստներն ու առևտուրը խթանելու նպատակով հրամանագրեր հրապարակեց, որոնցով արգելվեց հայերի բռնի հավատափոխությունը, կանոնավորվեցին հարկերը, օրինականացվեցին հայ եկեղեցիների կալվածքները: Հայերին նորից վստահվեցին արքունի և պետական բարձր պաշտոններ: Այսպիսով՝ 19-րդ դ. Պարսկաստանի ոսկերչությունն ամբողջությամբ հայ արհեստավորների ձեռքում էր գտնվում: Եվ ոչ միայն քաղաքի սովորական, այլև պարսկական արքունական ոսկերչությունն էր նրանց ձեռքում: Հայ ոսկերիչներն ու ակնագործներն էին պարսկական արքունիքին ոսկեղեն և ակնեղեն մատակարարողները: Աբբաս Միրզայի, Ֆաթալի շահի և Մահմեդ շահի ոսկերչապետները հայեր են եղել: Հռչակավոր ոսկերիչներից էր Թադեոս Առաքելյանը, որին Պարսկաստանում անվանել են Թուրապ: Նա այնքան մեծ հեղինակություն է ունեցել արքունիքում, որ նրա միջնորդությամբ Աբբաս Միրզան հարկերից ազատել է Թավրիզում բնակվող հայերին: Պարսկական արքունի լավագույն ոսկերիչներից էին նաև Ստեփան Եղիգարյանը, Թոմաս խան Մելիք Թովմասյանը, Ծերունը (Հովհաննես Մասեհյանի հայրը) և ուրիշներ (Աբրահամյան 1967, 232): Երբ Անգլիայի թագուհին 1961 թ. այցելել էր Իրան, կառավարության կողմից նրան էին հանձնել Նոր Ջուղայի հայ

ոսկերիչ Գևորգ Ղազարյանի սարքած ոսկյա բանալին՝ իր տուփով, որն ուներ հետևյալ արձանագրությունը՝ «Սպահան քաղաքի նվերը նորին գերազանցություն Անգլիայի թագուհուն, 1339, Սպահան»[5]: Սպահանի նահանգապետ արքայորդի Ջէլլե Սուլթանն իր ընտանիքի բոլոր զարդեղեններն ու արծաթյա իրերը պատրաստել էր տալիս հայ ոսկերիչներին, որոնցից էին Մինաս Հովսեփեանը և ոսկերչապետ Մկրտիչ Դրորյանը: Մահմադ Շահի օրով Աբբաս Միրզայի ոսկերչապետն է եղել Թովմասխան Մելիք Թովմասյանը (1835–1948թթ.), որի ձեռքով էին պատրաստվում արքունական բոլոր գոհարեղենները (Մինասեան 1983, 19–20)[6]: Նոր Ջուղայի ժառանգական ոսկերիչներից էին Ավետիք և Սիմոն Հովհաննիսյանները: Նրանց տոհմը ոսկերչությամբ էր զբաղվում 1700-ական թվականներից: Սիմոն Հովհաննիսյանը (1857–1918) և Ավետիք Հովհաննիսյանը (1869–1957) արծաթե և ոսկե զարդեր ու տարբեր առարկաներ էին պատրաստում: Նրանց սարքած հիմնական զարդերից էին «ձուկ և գարի», «քրմակ, բոժոժ» (քրմակ՝ պարսկերեն *որդ*), «աշմեր» (բազմաշերտ վզնոց-կրծքազարդ, երբեմն՝ դրամներով, *ձկներով*, *գարիներով*, չար աչքից պաշտպանող փիրուզե ակներով և այլն)[7]: Իրանում հայտնի ոսկերիչներից էին Արշավիր Բաբայանը (ծնվ. 1910 թ.) և նրա ավագ եղբայր Երվանդը (ծնվ. 1904 թ.), որոնք արհեստը ժառանգել էին իրենց հորից: Բազմաթիվ առարկաների հետ մեկտեղ վարպետ Արշավիրը հատկապես զարդերի պատվերներ էր ստանում քաղաքացիներից և շահի ընտանիքի անդամներից: Նա ևս աշխատում էր թե՛ ոսկով, թե՛ արծաթով, կիրառելով բազմապիսի տեխնիկաներ՝ կաղապարով ձուլում, քանդակազարդում, փորագրություն և այլն: Նրա աշխատանքները ինքնատիպ էին, չկրկնվող[8]: Իրանի հայ ոսկերիչներից ոմանք 1946 թ. տեղափոխվեցին Հայրենիք, ինչպես տաղանդավոր վարպետներ Հրաչ Ստեփանյանը, Արամայիս Հակոբյանը և այլք (Իսրայելյան 2021, 47–48):

Իրանի հայ ոսկերիչներից շատերն աշակերտել են Վանից այնտեղ գաղթած բազմահմուտ վարպետներին: Ոսկերիչներ Օննիկ Մանուկ-Խալոյանը[9] և Վարդան Դերձակյանը[10] շատ արժեքավոր տեղեկություններ են հաղորդել Իրանի հայ ոսկերիչ վարպետների մասին: Ըստ Մանուկ-Խալոյանի, 20-րդ դ. առաջին կեսին Թավրիզում հայ վարպետների մի քանի արհեստանոց կար: Երբ արհեստանոցների թիվն աճեց, վանեցի վարպետներն աստիճանաբար սկսեցին ընդունել նաև տեղացի հայերին ու սովորեցնել իրենց արվեստը:

Ոսկերչական արտադրանքի հարգադրոշմման վարչություն չկար: Հայ վար-

---

5 Մակագրության թարգմանությունը՝ Մարինա Բաբայանի:

6 Սույն գրքի 71–128 էջերում Լ. Մինասյանը ներկայացնում է Նոր Ջուղայի տարբեր ժամանակների ոսկերիչներին:

7 Հաղորդել է Ավետիս Հովհաննիսյանի թոռը՝ Ավո Հովհաննիսյանը 2003 թ.:

8 Հաղորդել է Արշավիր Բաբայանի դուստրը՝ Մարինա Բաբայանը 2003 թ.:

9 Երախտագիտությունս եմ հայտնում Օննիկ Մանուկ-Խալոյանին (ծնված Կարսում 1914 թ.) 1988 թ. իր տրամադրած մեքենագրված նյութերի համար:

10 Խորապես երախտապարտ եմ ոսկերիչ Վարդան Դերձակյանին՝ իր հաղորդած տեղեկությունների և Հայաստանի պատմության թանգարանին 2014 թ. նվիրած ոսկերչական գործիքների ու զարդերի (N11 770-1-2) համար:

պետների աշխատանքների հայերեն և պարսկերեն լեզուներով դրոշմները փոխարինող տառերը Դավիթ Փափազյանն էր գրում: Փորագրվում էին միայն արհեստանոցների անվանումները և դա բավարար էր, որպեսզի հավատային, որ ազնիվ աշխատանք է: Սա օրինաչափ էր, քանի որ աշխատողները բարեխիղճ էին, վարպետները՝ խստապահանջ: Ընդհանրապես կանոնակարգված էին ոսկերիչների աշխատանքն ու վարքը: Ի դեպ, ուշագրավ է այն փաստը, որ նրանք նշում էին հայ ազգային տոները, որոնց ժամանակ բանվորները չէին աշխատում, բայց վճարվում էին (Իսրայելյան 2023, 150–172):

Աշխարհագրական վայրից վայր տեղափոխությունների և աշխատաեղանակների բազմազանության մասին որպես օրինակ կարելի է բերել Իրանում աշխատած վանեցի վարպետներից Վահրամ Շիրինյանին (1920–2019): Նրանց ընտանիքը 1915 թ. Վանից գաղթել էր Ղրիմ՝ Թեոդոսիա, որտեղ նա ծնվել էր 1920 թ., այնուհետև 1927 թ. հաստատվել էին Թավրիզում: Շիրինյանը 1938 թվականից զբաղվել է ոսկերչությամբ: Նա աշխատել է արծաթով, ոսկով, պատրաստել է սպասք, զարդեր, իսկ ավելի ուշ տեղափոխվել է ԱՄՆ և աշխատել որպես թանկարժեք քարեր մշակող ակնագործ:

Այս և բազմաթիվ այլ փաստեր ցույց են տալիս, թե ինչպես են տեղաշարժվել հայ վարպետները և որ կարևորն է՝ ինչպես է տարածվել նրանց հեղինակած արտադրանքը:

Հնդկաստանի հայ ոսկերիչներից շատերն Իրանից՝ հատկապես Նոր Ջուղայից են այնտեղ գաղթել: Նրանցից հայտնի է Մանուկ Ստեփանյանը (Շամամի) (Մինասեան 1983, 128): Հնդկաստանում հայերը զբաղվում էին ասեղնագործությամբ, դարբնությամբ, դերձակությամբ, քարակոփությամբ, ներկարարությամբ (Աբրահամյան 1964, 456), սակայն Հնդկահայ գաղութում ամենամեծ թիվը կազմում էին ոսկերիչները, որոնք սկզբում բաց էին անում իրենց արհեստանոցներն առանձին-առանձին կամ մեկ-երկու հոգի միանում՝ կազմում էին փոքրիկ համքարություններ: Հայ ոսկերիչները Կալկաթայում այնպիսի համարում ունեին, որ նրանց հաճախ պատվերներ էին տալիս ոչ միայն Հնդկաստանից, այլ նաև Եվրոպայի ու Ասիայի զանազան երկրներից: Օրինակ՝ երբ Անգլիա տանելու համար հարկավոր էր պատրաստել հնդկական Բուդդա-գոյա տաճարի մանրակերտը, անգլիական Ստևֆե ոսկերչական ֆիրման հայ արհեստագործներին՝ որպես բարձրորակ վարպետների, հանձնարարեց այն պատրաստել (Աբրահամյան 1967, 260):

Եգիպտոսում հայտնի է, որ հայ ոսկերիչներ էին աշխատում 17-րդ դարում: Սիմեոն Լեհացին 1615 թ. իր «Ուղեգրության» մեջ նշել է, որ Կահիրեի Խան Խալիլ շուկայի մոտ ապրող հայ բնակչության մեծամասնությունը բաղկացած էր արհեստավորներից՝ ոսկերիչներից, սուր պատրաստողներից, դերձակներից, որոնք եկել էին Դիարբեքիրից, Հալեպից և Պոլսից: 18-րդ դարի վերջին և 19-րդ դարի սկզբին Կահիրեի հայ արծաթագործները մեծ մասամբ պոլսեցիներ էին (Աբրահամյան 1967, 54, 59–60): Հ. Խ. Թոփուզյանը գրում է, որ ոսկերչությունը, ներառյալ արծաթագործությունն ու ակնագործությունը, եգիպտահայերի հնագույն արհեստներից էր և զարգանում էր Կ. Պոլսի ոսկերչական հռչակավոր շուկայի հետ սերտ կապ

պահպանելով: Կահիրեի հայ ոսկերիչները համախմբված էին Խան ալ-Խալիլ շուկայում: Նա հիշատակում է նաև Խան ալ-Խալիլի հայ ոսկերիչների մասին ֆրանսիական բանակի գիտնականներից Ժոմառի վկայությունները. «Ոսկերիչները, ակնագործները և գոհարավաճառներն իրենց արհեստանոցներն ունեն մի հատուկ թաղում... Այդ աշխատավորները, որոնց արհեստը... գործնականում պահանջում է առավել գիտելիքներ և վարպետություն, համարյա բոլորը սիրիացի քրիստոնյաներ և հայեր են: Ոսկերչության մեջ բավական խորն էր արտահայտված աշխատանքի ներքին բաժանումը: Արծաթագործությունը, ոսկերչությունից անջատվելով, դարձել էր ինքնուրույն արհեստ, իսկ ոսկերչությունը բաժանված էր երկու հիմնական մասնագիտացված ճյուղի՝ սատեքյարության և մխլայիջիության: Սատեքյարները ձույլ ոսկուն տալիս էին պահանջված ձևը, իսկ մխլայիջիները կամ ագուցողները հղկում և ագուցում էին թանկագին քարերը»: Այստեղ նա նշում է նաև, որ Մոհամմեդ Ալիի արքունիքին սպասարկում էին հայ ոսկերիչներն ու գոհարավաճառները և որ 19-րդ դ. կեսերին խդիվական պալատի ոսկերչական պատվերները հանձնարարվում էին Կ. Պոլսի հայ վարպետներին (Թոփուզյան 1978, 44–45): Ֆրանսիացի բժիշկ, Պետերբուրգի Ակադեմիայի թղթակից անդամ Անտուան-Բարտելեմի Կլոյի (1793–1868) վկայությամբ Կահիրեի ադամանդագործները, որ մեծ քանակ էին կազմում, բոլորը հայեր էին: Եվ նրանք կարողանում էին սքանչելի կերպով մշակել այն թանկարժեք քարերը, որոնք նրանց էին վստահում թուրքական բարձրաստիճան անձինք (Клот-бей 1843, 243): «Մուրճ» ամսագրում կարդում ենք. «Եգիպտոսի հայ գաղթականութիւնը աւելի աչքի զարկաւ արհեստական և առևտրական տեսակէտներով այն օրէն սկսեալ, երբ Տաճկահայաստանի ընդհանուր ջարդերուն պատճառով Փոքր Ասիոյ ամեն քաղաքներէ Եգիպտոս խուժեցին հազարաւոր գաղթականներ՝ բերելով իրենց հետ արհեստներու բազմազանութիւն և արդիւնաբերական զանազան պարապումներ... այժմ... ունինք ամբողջ շուկաներ որոնք հայութեամբ են գրաւած. այսպէս Գահիրէի մէջ Խանը-Խալիլ կոչուած ամենաբանուկ հրապարակը և Աղեքսանդրիոյ Սարրաֆիէ կոչուած փայլուն շուկան խիտախիտ բռնուած են հայ ոսկերիչներով, ակնավաճառներով, որոնց արևելական արուեստի նրբութիւնը չունի իրեն մրցակից» (Ավօ 1904, 42):

19-րդ դարում Եգիպտոսի փոխարքաների պալատական հայ ոսկերչապետներից էին Բարսեղ Ձևահիրջյանը, Եղիա Ձևահիրջյանը, Հովհաննես Նախնուխը և այլք: Ա. Ալպոյաճյանը, անուն առ անուն թվարկելով տասնյակ համբավավոր եգիպտահայ ոսկերիչների (ոսկերիչ-գծագրիչների, ոսկերիչ-ագուցողների, ոսկերիչ-փորագրիչների), նշում է՝ «Հայերը ոսկերչությունը Եգիպտոս ներմուծողները եղած են և արհեստին զարգացման, ինչպես նաև բնիկ Եգիպտացի տարրին ալ արհեստին մէջ մարզվելուն և սովորելուն պատճառ եղած են» (Աբրահամյան 1967, 60): Ս. Գաբամաճյանը ոսկերիչների մասին գրել է. «Հայերը, իբրև արհեստավոր Եգիպտոսի մեջ առաջին տեղը կբռնեն ոսկերչության մեջ, արդարև, հայ ոսկերիչները մասնավոր գաղութ մը ձևացուցած են Խան Խալիլի համբավավոր կենտրոնի մեջ և իրենց ճարտարվեստի ընտիր արտադրությունները իրավամբ գնահատված են ճաշակի բոլոր սիրահարներեն»: Կահիրեում և Ալեքսանդրիայում 19-րդ դ. ոսկերչությունը հայերի բացարձակ մենաշնորհն էր (Աբրահամյան 1967, 59–60):

Եթովպիայի հայ բնակչությունը աճեց 19-րդ դ. վերջին՝ հատկապես 1895–1896 թթ. համիդյան վայրագությունների հետևանքով, երբ Թուրքիայից փախած հայ գաղթականները զանգվածաբար հաստատվեցին զանազան քաղաքներում: Նրանց մեջ մեծ թիվ էին կազմում ոսկերիչները, զինագործները, երկաթագործները և այլ վարպետներ: Նրանք զբաղվում էին նաև փղոսկրի մշակությամբ: Արժեքավոր է Ադիս-Աբեբայի ռուսական դեսպանատան բժշկի ռուսական արքունիք ուղարկած զեկուցագիրը՝ «Արհեստավորների մեջ ավելի նշանակալի են հայերի մատուցած ծառայությունները: Նրանք են եղել կատարելագործված արհեստների մասին առաջին գաղափար տվողները Մենելիք թագավորի մոտ: Շատ անգամ նյութական վնաս կրելով, նրանք ցույց են տալիս, թե իրենք ինչի են ընդունակ: Հայ վարպետները սիրով են եթովպացի աշակերտներին սովորեցրել իրենց արվեստը»: Բաթաբան Հայկը նույնպես նշում է. «Հայն ըլլալով մեծ մասամբ արհեստավոր և անմիջական շփման մեջ գտնվելով բնիկ տարրերի հետ, անոր սովորեցուցած է իր արհեստը, հասուցած է շատ մը արհեստավորներ և օգտակար հանդիսացած եթովպացիներուն ոսկերչության, թիթեղագործության, կահույքագործության, գորգագործության և այլնի մեջ»: Ոսկերչություն ուսուցանելու առումով մեծ է եղել նաև Մենելիք երկրորդի ոսկերչապետ Տիգրան Հեպեյանի դերը: Նրա ջանքերով տասնյակ եթովպացիներ ոսկերչություն են սովորել և այդ արհեստը տարածել երկրում: Եվ ինքը՝ Հեպեյանն էլ պատրաստում էր Մենելիքի թագերը, որոնցից յուրաքանչյուրը մի գլուխգործոց էր (Աբրահամյան 1967, 83–85):

Եթովպիայի ամենահայտնի հայ ոսկերիչներից էր Բեդրոս Սևաջյանը՝ ծնված Այնթապում (1918–1977): Նրա հայրը՝ Ավետիս Սևաջյանը այստեղ էր գաղթել 1896 թ. համիդյան ջարդերից հետո: 1916 թ., վստահելով Սայքս-Պիկո համաձայնագրին, նա վերադարձել էր Այնթապ, բայց հետո ստիպված կրկին եկել էր Ադիս Աբեբա և հաստատվել այստեղ: Նա արդյունաբերող և առևտրական էր՝ ուներ կաշեգործարան, կոշիկի գործարան և ալրաղաց: Բեդրոս Սևաջյանը տարրական կրթությունը ստացել է Ադիս Աբեբայում Թեֆերի Մաքոնեն դպրոցում: Այնուհետև աշակերտել է Հայլե Սելասիե Առաջինի պալատական ոսկերիչ, նրբացանց աշխատանքի վարպետ Նիգողոս Ձիդեջյանին: 1938 թ. Բեդրոս Սևաջյանը մեկնել է Միլան՝ Իտալիա, որտեղ ոսկերչություն և արծաթագործություն է ուսանել, ավարտելիս ֆիրման նրան այնքան բարձր է գնահատել, որ արժանացրել է Պաոլո Տրուբեցկոյի պատվավոր պարգևին: Վերադառնալով Եթովպիա՝ նա վերսկսել է աշխատել Նիգողոս Ձիդեջյանի հետ: 1946 թ. Սևաջյանը գնել է Ձիդեջյանի ձեռնարկությունն ու արհեստանոցը (քանի որ Ձիդեջյանն արդեն ծեր էր): Հետագայում ընդլայնվել է նրա գործունեությունը. նա պետության հետ պայմանագիր է կնքել, որի համաձայն բացի բուն ոսկերչությունից, արտադրել է զինվորական համազգեստի կոճակներ, խորհրդանշաններ, թագեր, աստղեր և դրամների մանր միավորներ: 1950 թ. Եթովպիայի կայսր Հայլե Սելասիեի հրամանով Սևաջյանը նշանակվել է կայսերական դրամահատարանի փորձաքննություն անցկացնող մետաղաքննիչ և այս պաշտոնում մնացել է մինչև 1974 թ. հեղափոխությունը, որից հետո կոնֆիսկացվել ու քանդվել են նրա ֆաբրիկան ու խանութը: Մինչդեռ 1955 թ. Սևաջյանը Մեծ Բրիտանիայից, Չեխոսլովակիայից և Իտալիայից հաստոցներ էր բերել մեդալներ և

այլ առարկաներ սարքելու համար, որոնք ևս ջարդվեցին հեղափոխության ժամանակ: Նրա արտադրանքն արտակարգ բարձր որակի էր պատկերների հստակությամբ, ռելիեֆների ընդգծվածությամբ և վերջում՝ ձեռքի աշխատանքով կատարված հարդարանքով: 1960 թ. Սևաջյանը սկսեց որպես զարդ կրելու համար «Լալիբելա» և «Աքսում» խաչեր պատրաստել, ինչպես նաև խանութի և տուրիստական շուկայի համար նորարարական փոքրիկ առարկաներ՝ մոխրամաններ, լուցկու տուփերի բռնիչներ, սուրճի գդալներ և այլն:

Բեդրոս Սևաջյանը սարքել է բազմաթիվ արժեքավոր առարկաներ, որոնք Հայլե Սելասիե Առաջին կայսրը հրամցրել է իր երկիր եկող բարձրաստիճան հյուրերին և ինքն այլ երկրներ այցելելիս՝ նվեր տարել: Սրանցից են արծաթե ծաղկեպսակը (մոտ 14 կգ քաշով), որ Հայլե Սելասիե Առաջինը 1963թ. Վաշինտոնում նվիրել է Լինկոլնի հուշահամալիրին և ոսկե մատուցարանը (50 x 80 սմ, մոտ 14 կգ), որ 1965 թ. նվիրել է Էլիզաբեթ Երկրորդ թագուհուն, երբ նա եկել էր Եթովպիա: Մատուցարանը Բուքինգհեմյան Պալատում ցուցադրվում է թագուհու մյուս նվերների հետ մեկտեղ:

Սևաջյանի սարքած առարկաների դրոշմներն են՝ «B. A. Sevadjian Made in Ethiopia», իսկ եթե շատ փոքր չափերի են՝ «SB Ethiopia»: Նրա վաղ շրջանի աշխատանքների դրոշմներն են՝ «made in Ethiopie» (Sevadjian 2024):

1915 թվականից հետո առավել ընդլայնվեց հայ ոսկերիչների բնակության աշխարհագրությունը, քանի որ թուրքական կոտորածներից ողջ մնացած հայերը սփռվեցին աշխարհով մեկ: Սպանդից փրկված մարդիկ իրենց հետ տարբեր երկրներ տարան ավանդական զբաղմունքները, հմտություններն ու կարողությունները:

Այսօր ևս շնորհալի ու տաղանդավոր հայ ոսկերիչներ են աշխատում արտասահմանում: Սակայն անուններն ու ազգանունները փոխելու պատճառով միշտ չէ, որ կարելի է ճանաչել նրանց ազգային պատկանելությունը: Այսպիսին է փարիզաբնակ ժամանակակից ամենաշնորհալի ոսկերիչներից մեկը՝ Ժան Վանդոմը՝ ի սկզբանե Օհան Տուհդարյանը՝ ծնված 1930 թ. Լիոն քաղաքում: Վանդոմի հայրը Կապադովկիայից է, մայրը՝ Մարզվանից: Նրանք 1920 թ. են Ֆրանսիա տեղափոխվել: Դեռևս 1968 թ. հռչակավոր Larousse illustre-ում նրա մասին գրվել է, որ արդի ոսկերչական արվեստի ռահվիրան է: Վանդոմի անկրկնելի աշխատանքները գտնվում են ամենահեղինակավոր թանգարաններում ու մասնավոր հավաքածուներում: Նրա մասին տասնյակ հոդվածներ ու գրքեր են գրվել, ֆիլմեր նկարահանվել, հաղորդումներ հեռարձակվել (Микаелян 2003): Ներկայում Ֆրանսիայի ամենահռչակավոր ոսկերիչներից է նաև Ժան Վանդոմի որդին՝ Թիերի Վանդոմը՝ ծնված Վիլմոմբլում 1964 թ. (Thierry-Vandome 2024): Դիպուկ բնորոշում է տրված ֆեյսբուքում Տուհդարյանների մասին՝ «Թիերի Վանդոմի հոր՝ Ժան Վանդոմի կամ Օհան Տուհդարյանի անունը ոսկե տառերով փորագրված է ֆրանսիական ոսկերչության պատմության մեջ: Ժամանակակից զարդեղենի նախահայր, մեղմ ու լրջմիտ դեմքով նրա հայրը հիացմունքի աղբյուր է, որի տաղանդն իր համար առեղծված է մնում» (https://www.facebook.com/AuroraPrizeAM/posts/1772203669649280/):

Եզրակացություն

Ընդհանրապես արվեստագետը, իր անհատական ունակությունների հետ մեկտեղ, ակամա կրում է մշակութային այն շերտերը, որոնք դարեդար, սերնդեսերունդ կուտակվելով, փոխանցվում են նրան և ամբողջացնում ստեղծագործական ներուժն ու ինքնարտահայտումը: Սրա վառ օրինակներից մեկն է ոսկերիչ, արծաթագործ ու արվեստաբան Հայկ Տեր-Ղևոնդյանը: Նրա նախնիները 17-րդ դ. սկզբին Ջուղայից փոխադրվել են Իրան՝ Նոր Ջուղա, հետո Մարաշ, այնուհետև գաղթել են Կահիրե, հետո՝ 1946 թ. Հայաստան (Մինասեան 1983, 21): Հայկ Տեր-Ղևոնդյանը ոչ միայն տաղանդավոր արծաթագործ էր, բազմապիսի ստեղծագործությունների հեղինակ, այլև հայ ոսկերչական արվեստի լավագույն գիտակը, տեսաբանն ու մշակույթը կրողը:

Տարբեր երկրներում պատրաստված հայկական աշխատանքները համապատասխանաբար կրում են այդ երկրների կնքադրոշմները: Դա է պատճառը, որ հայկական ոսկերչական իրերի վրա, բացի հայերենից, կան արաբատառ, լատինատառ, ռուսերեն, վրացերեն և այլ լեզուներով դրոշմներ:

Հարկավոր է ավելացնել, որ ոսկերչական արվեստին վերաբերող հայերեն, պարսկերեն, արաբերեն և այլ լեզուներով բառերի հիման վրա հայկական տարբեր ազգանուններ են ստեղծվել: Մասնագիտության բովանդակությունն արտահայտող հայկական ազգանուններից է *Ղալամքարյանը*՝ թանկարժեք մետաղների վրա գրիչով փորագրողների ազգանունը, որ հայտնի է հատկապես Մուշում և Վանում: Այս շարքին են դասվում *Ջարգարյանները*[11], *Ոսկերչյանները*, *Արծաթպանյանները*, *Ջևահիրջյանները*[12], *Գոյումջյանները*[13]: Մինչև մեր օրերը Աստրախանում կային *Մերեբրյակով* ազգանունով հայազգիներ, որոնք վկայում էին, որ իրենք Գանձասարի բնակիչների հետնորդներ էին (Հակոբյան և այլք 1986, 787):

Հայ վարպետների աշխատանքները բարձր են գնահատվել միջազգային ցուցահանդեսներում, դրանք զարդարել են տարբեր երկրների թագուհիների, թագավորների, կայսրերի, նախագահների միջավայրն ու զգեստները, մատուցվել են որպես բարձրաստիճան անձանց նվերներ: Դրանք որպես անհրաժեշտ առարկաներ են օգտագործվել եկեղեցիներում ու տաճարներում, առօրյա կենցաղում, տոների ու ծիսակատարությունների ժամանակ և այլն: Այստեղ փոքրաթիվ երկրների վարպետների մասին նշվեց, մինչդեռ հսկայական քանակությամբ հայ վարպետներ են աշխատել ամենատարբեր երկրներում՝ ստեղծելով բարձրարժեք արվեստ և շռայլորեն այն տարածելով ամենուր:

---

11 *Ջարգյար*՝ ոսկերիչ:

12 *Ջավահիր*՝ գոհար:

13 *Գոյումճու* բառին արմատը, *գույում*հին թուրքերէնի մէջ արծաթ կը նշանակէ (Սագըզեան 1930, թիւ 5, 14):

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ԲԱՐԹԻԿՅԱՆ 2003 – Բարթիկյան Հ., Բյուզանդիա, *Հայ գաղթաշխարհի պատմություն*, խմբագիր Վարդգես Միքայելյան, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, հ. 2, 4–64:

ՀԱԿՈԲՅԱՆ 1986 – Հակոբյան Թ. Խ., Մելիք-Բախշյան Ստ. Տ., Բարսեղյան Հ. Խ., Գանձասար, *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան*, Երևանի համալսարանի հրատ., հ. 1, 787:

ՂԱԶԱՐՅԱՆ 1986 – Ղազարյան Հ., Տյուզյաններ, *Հայկական սովետական հանրագիտարան*, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1986, հ. 12, 23-24:

ՄԱԼԽԱՍԵԱՆՑ 1944 – Մալխասեանց Ստ., *Հայերէն բացատրական բառարան*, հ. 1 Երևան, Հայկական ՍՍՌ Պետական Հրատարակչութիւն, 1944:

ՄԱԼԽԱՍԵԱՆՑ 1945 – Մալխասեանց Ստ., *Հայերէն բացատրական բառարան*, հ. 4, Երևան, Հայկական ՍՍՌ Պետական Հրատարակչութիւն, 1945:

ՄՈՒՇԵՂՅԱՆ 2009 – Մուշեղյան Ե., *Հայերեն արձանագրությամբ առարկաներ*, պրակ III, Հայաստանի պատմության թանգարան, Երևան, 2009:

АСТВАЦАТУРЯН 1978 – Аствацатурян Э. Г., *Мастера серебряного дела Закавказья в XIX – начале XX в.*, Справочник, Часть II, Москва, Издательство «Наука», 1978.

Ուսումնասիրություններ

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ 1964 – Աբրահամյան Ա. Գ., *Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության*, Երևան, հ. Ա, «Հայպետհրատ», 1964:

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ 1967 – Աբրահամյան Ա. Գ., *Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության*, հ. Բ, Երևան, «Հայաստան» հրատ., 1967:

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ 1956 – Աբրահամյան Վ. Ա., *Արհեստները Հայաստանում IV–XVIII դդ.*, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1965:

ԱԼՊՈՅԱՃԵԱՆ 1961 – Ալպոյաճեան Ա., *Յուշամատեան Կուրինահայերու*, Տպարան Տօնիկեան, Պէյրութ 1961:

ԱՎՕ 1904 – Ավօ, Եգիպտահայք, *Մուրճ*, Թիֆլիս, Տպարան Ա. Քութաթելաձէի, 1904, N7, 37–49:

ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ 1967 – Բարխուդարյան Վ. Բ., *Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմություն (1779–1861 թթ.)*, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1967:

ՋՈՒԼԱԼՅԱՆ 1972 – Ջուլալյան, Մ. Կ., գլ. 7, Սոցիալ-տնտեսական հարաբերություններն Արևմտյան Հայաստանում XVI–XVIII դարերում, *Հայ ժողովրդի պատմություն*, IV, խմբ. Արևշատյան Ս.Ս., Բարխուդարյան Վ. Բ., Ոսկանյան Վ. Կ., Ջուլալյան Մ. Կ., Փափազյան Հ.Դ., Խաչիկյան Լ.Ս., Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1972, 275–291:

ԹԷՈԴԻԿ 1926 – Թէոդիկ, Արգաղիր նուէր, *Ամենուն տարեցոյցը 1926*, Վենետիկ, Ս. Ղազար, 523–524:

ԹՈՓՈՒՋՅԱՆ – Թոփուզյան Հ. Խ., *Եգիպտոսի հայկական գաղութի պատմություն*, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1978:

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ 2021 – Իսրայելյան Ա. Ռ., *Հայուհիների զարդերը XVIII–XXդդ.*, Երևան, Հայաստանի պատմության թանգարան, 2021:

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ 2023 – Իսրայելյան Ա. Ռ., Վասպուրականի ոսկերիչները, *Աշխատություններ Հայաստանի Պատմության թանգարանի*, Երևան, ՀՊԹ հրատ., 2023, 1 (11), 150–172:

ՀՆԱՍԷՐ 1928 – Հնասէր Գ., Հայ վաճառականներ և արհեստաւորներ Կ. Պոլսոյ մէջ (16 և 17-րդ դար), *Հայաստանի կոչնակ*, ԻԸ տարի, դեկտեմբեր 1, Նիւ Եորք, The Gotchnag Publishing Company Co. 331, New York, 1928, թիւ 48, էջ 1515–1516:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ 1972 – Հովհաննիսյան Ա. Գ., Հայաստանի քաղաքական վիճակը Սեֆյան Իրանի և Օսմանյան Թուրքիայի տիրապետության տակ, *Հայ ժողովրդի պատմություն*, հ. IV, խմբ. Արևշատյան Ս. Ս., Բարխուդարյան Վ. Բ., Ոսկանյան Վ. Կ., Ջուլալյան Մ. Կ., Փափազյան Հ.Դ., Խաչիկյան Լ.Ս., Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1972, 81–128:

ՂԱԶԱՐՅԱՆ 1972 – Ղազարյան Հ. Մ., Կոստանդնուպոլսի և Զմյուռնիայի գաղթօջախները, *Հայ ժողովրդի պատմություն*, IV, խմբ. Արևշատյան Ս. Ս., Բարխուդարյան Վ. Բ., Ոսկանյան Վ. Կ., Ջուլալյան Մ. Կ., Փափազյան Հ.Դ., Խաչիկյան Լ.Ս., Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1972, 300–313:

ՂԱԶԱՐՅԱՆ 1974 – Ղազարյան Հ. Մ., Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական վիճակը 1830–1860-ական թվականներին, *Հայ ժողովրդի պատմություն*, խմբ. Աղայան Ծ., Պ., Ավետիսյան Վ. Ա., Գրիգորյան Ջ. Տ., Դիլոյան Վ.Ա., Ղազարյան Հ. Մ., Ներսիսյան Մ. Գ., հ. V, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1974, 273–347:

ՄԻՆԱՍԵԱՆ 1983 – Մինասեան Լ. Գ., *Ուսերչութիւնը Նոր Ջուղայում*, Տպարան Ս. Ամենափրկիչ Վանքի, Նոր Ջուղա, 1983:

ՇԱՀԱԶԻԶ 1901 – Շահազիզ Ե., Նոր-Նախիջևանը և Ն. Նախիջևանցիք, *Ազգագրական հանդէս*, Թիֆլիս, 1901, VII–VII, 5–102:

ՇԱՏՈՒՈՐԵԱՆ 1975 – Շատուորեան Վահէ, Ուրուագիծ թրքահայ ուսերչութեան պատմութեան, *«Շողակաթ» տարեգիրք*, «Շողակաթ» – Ուսուցչաց հիմնարկի «Յակոբ Աբէլեան» Տպարան, Իսթանպուլ, 1975, 18–28:

ՍԱԳԸԶԵԱՆ 1930 – Սագըզեան Արմենակ, Կ. Պոլսոյ Հայ ուսերչութիւնը ԺԸ–ԺԹ դար, *Անահիտ, հանդէս մտրածման և արուեստի*, Փարիզ, տպարան «Անահիտ», 1930, Ա Տարի, թիւ 5, յունվ.–փետր., 9–15

ՍԱԳԸԶԵԱՆ 1930 – Սագըզեան Արմենակ, Կ. Պոլսոյ Հայ ուսերչութիւնը, *Անահիտ հանդէս մտրածման և արուեստի*, Փարիզ, տպարան «Անահիտ», 1930, Ա Տարի, թիւ 6, մարտ–ապրիլ, 39–51:

ՍՏԵՓԱՆՅԱՆ 2011 – Ստեփանյան Հ. Ա., *Հայերի ներդրումն Օսմանյան կայսրությունում*, Գասպրինտ, Երևան, 2011:

ՉԵԼԵԲԻ 1967–Էվլիա Չելեբի, *Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 4, Թուրքական աղբյուրներ*, Գ, Թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Ա. Խ. Սաֆրաստյանի, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ. 1967:

ГОЛОС АРМЕНИИ – В Армянском фраке, *Голос Армении*, 15 ноября, Ереван, 2011.

ЗГЛЕНИЦКИЙ – Згленицкий В., Состояние мастерства и его нужды, *Труды перваго с'езда деятелей по кустарной промышленности Кавказа в г. Тифлисе*, Тифлис, 1902, Тип. Канц. Главнонач. гр. ч. На Кавк., 192–196.

КЛОТ-БЕЙ 1843 – Клот-бей А.-Б., *Египет в прежнем и нынешнем своем состоянии*, Часть вторая, Перевод с французского Андрея Краевского, С. Петербург, Типография К. Жернакова, 1843.

МИКАЕЛЯН 2003 – Микаелян К., Волшебная шкатулка Вандома, “*Новое время*”, Ереван, 12 августа, 2003.

ОВНАНЯН 1968 – Овнанян С. В., *Армяно-болгарские исторические связи и армянские колонии в Болгарии во вторий половине XIX в.*, Ереван, Изд. АН Арм. ССР, 1968.

ОРБЕЛИ 1916 – Орбели И. А., Два серебряных ковша XVI века с армянской и греческой надписями, *Христианский Восток*, том V, вып. I, Типография Императорской Академии Наук, Петроград, 1916, 1–13.

ЮХТ 1958 – Юхт А. И., Армянские ремесленники в Астрахани в половине XVIII в., *Տեղեկագիր Հայկ. ՍՍՌ ԳԱ*, Երևան, 1, 1958, 37–54:

DER NERSESSIAN 1945 – Der Nersessian Sirarpie, *Armenia and the Byzantine Empire*, Cambridge, Massachusetts, Harvard University Press, 1945.

CHALABIAN 1993 – Chalabian Antranig, The Master Goldsmith Who Designed and Made the Hilt and Scabbard of General Andranik's Sword. "*Erebouni*", January, London, 1993.

HOMMAIR de HELLE– Hommair de Helle Xavier, *Voyage les stepps de la mer Caspienne, le Caucase, la Crimèe et la Russie meridionelle*, t. I, Paris, 1843.

KURKMAN 1996 – Kurkman Garo, *Ottoman Silver Marks*, Istanbul, Mathusalem Publications, 1996.

Էլեկտրոնային նյութեր

Նոր Մարմարա, օրաթերթ, 8 մարտի, Ստամբուլ, 2017թ., www.normarmara. com.

SEVADJIAN – Jeweler to an Emperor: Bedros A. Sevadjian (1918–1977) https://armenianweekly.com/2016/08/15/jeweler-to-an-emperor-bedros-a-sevadjian-1918-1977/ (20.03.2024)

Սևան Բրչաքչը: https://www.tert.am/am/news/2016/03/01/golberg/jewellry/1948437 03.05.2024

Thierry Vendome – https://auroraprize.com/hy/thierry-vendome 20/03/2024

https://www.facebook.com/AuroraPrizeAM/posts/1772203669649280/?_rdr. 29/03/2024

Astghik Israelian
PhD

History Museum of Armenia
astghikisraelian@gmail.com

THE GOLDSMITHS OF SOME ARMENIAN COLONIES

Keywords: colony, techniques, guilds of craftsmen, stamps, church utensils, decorations, traditions.

Armenian colonies are spread over all the continents of the world. The reason for the establishment of colonies was the country's political destruction and the economic decay over the centuries. Most of the craftsmen, including goldsmiths, left the country and settled in foreign countries. For this reason, Armenian jewelers worked outside their country in places where the people were forcibly relocated. They carried the techniques, the conceptual characteristics and styles coming from their ancestors, passing them down from generation to generation. They continued to maintain their special national traditions, customs, rules and order for a long time. In the colonies, Armenian masters created their works and at the same time taught their crafts to both compatriots and foreign students. They made church utensils, household objects, ornaments and so on, which were used in the country where they lived, and exported to other countries. The products made by Armenian masters were highly appreciated at international exhibitions, they usually decorated the royal furnishings and garments. The kings, emperors and presidents of different countries presented the works of Armenian masters to high-ranking individuals as precious gifts.

Armenian handiwork made in different countries bears the seals of those countries accordingly. That is the reason why, in addition to Armenian, there are stamps in Arabic, Latin, Russian, Georgian and other languages on Armenian jewelry. Even today, gifted and talented Armenian jewelers work abroad. However, it is not always possible to recognize their ethnicity due to changing names and surnames.

Астхик Исраелян
Кандидат исторических наук

Музей Истории Армении
astghikisraelian@gmail.com

ЮВЕЛИРЫ НЕКОТОРЫХ АРМЯНСКИХ КОЛОНИЙ

Ключевые слова: колония, техника, ремесленная организация, штамп, церковная утварь, украшения, традиция.

Армянские колонии распространены по разным странам всех континентов Земли. На протяжении веков появление колоний было вызвано политическим и экономическим распадом страны. Большое количество ремесленников, в том числе ювелиров, покидали страну и селились в зарубежных странах. По этой причине армянские ювелиры на протяжении веков работали за пределами своей страны, куда они были насильственно переселены. Они продолжали творить теми техническими, стилистическими и концептуальными методами, которые веками передавались из поколения в поколение. Они также сохраняли свои особые национальные традиции, навыки, нравы и порядки. В колониях армянские мастера трудились и одновременно обучали своему ремеслу как соотечественников, так и иностранных учеников. Они изготавливали церковную утварь, предметы быта, украшения, которые использовали в данной стране и экспортировали за рубеж. Работы армянских мастеров высоко оценивались на международных выставках. Они украшали окружающую среду и наряды королей, императоров, президентов разных стран, а также преподносились в качестве подарков высокопоставленным гостям государств.

Армянские произведения, изготовленные в разных странах, имеют соответственно клейма данных стран. Именно поэтому на армянских ювелирных произведениях помимо армянского, имеются клейма на арабском, латинском, русском, грузинском и других языках. И сегодня одаренные и талантливые армянские ювелиры работают за границей. Однако не всегда можно узнать их этническую принадлежность, так как имена и фамилии изменены.

Ասրղիկ Իսրայելյան

ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂԹԱՎԱՅՐԵՐԻՑ ՄԻ ՔԱՆԻՍԻ ՈՍԿԵՐԻՉՆԵՐԸ

Նկ. 1. Խաչ, արծաթ, 1724 թ., Նոր Նախիջևան, ՀՊԹ Ա 6834

Նկ. 2. Խաչ, արծաթ ոսկեզօծ, 1673, Նոր Նախիջևան, ՀՊԹ Ա 6822

Նկ. 3. Խաչ պատվանդանով, արծաթ, 1806, Նոր Նախիջևան, արձանագրությամբ՝ Ցշդկէ Սբ խաչս Կոստանդինապոլցի Ղազարոսի որդի Պետրոսին Նոր Նախիջէվան ի դոն Սբ Նիկողաոսին ի թվին 1806: ՀՊԹ Ա 6830

Նկ. 4. Խաչ արծաթ ոսկեջրած, 1799, Նոր Նախիջևան, արձանագրությունը 4 տողով՝ Յ(ի)շ (ա)տ(ա)կ է ս(ուր)բ խաչս Նիշիվան Ի դուռն ս(ուր)բ Լուսա (ւ)որչին, Արութինի Որդի Կիրակոսին ի (ո)գուն, թվին ՌՄԽԸ ին, ՀՊԹ Ա 6819:

Նկ. 5. Գոտի, արծաթ, XIX դ., Տրապիզոն, ՀՊԹ Ա 6431

Նկ. 6. Ապարանջան, ոսկի, 1890թ., Տրապիզոն,
Մաքրուհի Մազլումյանի օժիտի զարդերից է, ՀՊԹ Ա 11078

Նկ. 7. Մանանոցուի, արծաթ, 1861, Կոստանդնուպոլիս, նվեր Գրիգոր և Նվեր
Գլեճյանների Մոնրեալ, ՀՊԹ Ա 10979

Նկ. 8. Սկիհ, արծաթ, 1815 թ., Կոստանդնուպոլիս, արձանագրությունը՝ Ստացեալ (յ)հշ(ա)տ(ա)կ է սկիս Բարթուղիմէոսի Առաքելոյն աթոռոյն արդեամբ բնիկ միաբան Կարապետ վարդապետին, 1815 ինին, յաւուրս առ(ա)ջն(ո)ւ(թ)ե(ա)ն Իսրայել արքեպ(իսկոպո)սին կ(ո)ստ(ա)ն(դ)նուպ(ո)լս(ե) ց(ւ)ոյ: ՀՊԹ Ա 6797

Նկ. 9. Գոտի, արծաթ, XVIII-XIX դդ., Նոր Ջուղա, նվեր Ավո Հովհաննիսյանից, «Խալահան» արձանագրությամբ, ՀՊԹ Ա 11079-8

Նկ. 10. Սուր պատյանով, պատկանել է զորավար Անդրանիկ Օզանյանին, 1919թ., Եգիպտոս, Կահիրե, արծաթ, պողպատ, փղոսկր, ադամանդ, սուրակ, շաիյոռ, հեղինակ՝ Կարապետ Արիֆյան, կապարող Տենիրճյան, փորագրողներ՝ Գարագաշ և Մինասյան: Արձանագրություններն են՝ «Եգիպտահայերը Անդրանիկին», «Պաշ Գալէ, Խոյ- Տիլիման, Վան, Պիթլիս, Մուշ, Սասուն, Շուշի գալէ, Նախիջևան, Ղարաբաղ», «Պատիւ Իրաւունք», «Եգիպտես 1919»: ՀՊԹ 4345